

Դավիթ Ս. Գյուրջինյան
Բանասիր. գիտ. թեկնածու

ՀԱՅ ՀԱՎԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿՈՂ ՀԱՅՅԵՐԵՆ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ*

Բանալի բառեր – հայ հավաքականություն, հավաքական անուններ, հավաքական գոյական, բուն հավաքական գոյականներ, հայք, հայություն, սփյուռքի հայություն:

Մուտք

Հավաքականությունը հասկացական կարգ է: Իմացական տեսանկյունից հավաքական անունը¹ (գոյականը) ներկայացնում է միասեռ, որոշակի հատկանիշով միավորվող՝ միատեսակ առարկաների (անձ և իր) բազմություն՝ որպես միասնական ամբողջություն²: Բայց դա ներկայացվում է «առանց քանակային բնութագրման»³:

Հավաքական ամբողջության (կամ բազմության, խմբի) «մեջ մտնող միավորների բաժանական ընկալումը ետին պլան է մղված, իշխում է դրանց ամբողջության, միասնության, միավորվածության գաղափարը»⁴: Ավելին, անգամ ասվում է, որ հավաքական գոյականները «ցույց են տալիս միատեսակ առարկաների անբաժանելի ամբողջություն»⁵ (ընդգծումները մերն են–Դ.Գ.):

Քերականական տեսանկյունից հավաքականությունը ենթակարգ է, որ գտնվում է թվի կարգի տիրույթում: Այլ կերպ ասած՝ հավաքական գոյա-

*Հոդվածն ընդունվել է տպագրության 07.06.2018:

1 **Հավաքական** (անուն) եզրույթն առաջին անգամ գործածել է Հովհ. Կոստանդնուպոլսեցին (տես **Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարաբյուրյան Թ. Ա.**, Լեզվաբանական բառարան, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1975, էջ 172): Քերականը տարբերակում է անվան երեք տեսակ՝ հատուկ, հասարակ և հավաքական: Հավաքականների մասին գրում է, որ դրանք «եզականաթուով զբազմություն ինչ ժողովապէս նշանակեն» (տես **Յովհաննէս վրդ. Կոստանդնուպոլսեցի**, Ջտութիւն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական, Հռոմ, 1674, էջ 126): **Հավաքական անուն** եզրույթն այսօր էլ հանդիպում է հայերենագիտության մեջ (տես **Գյուլգառյան Դ.**, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Եր., «Գորբալ» համալսարան, 2016, էջ 87): Մենք կգործածենք ինչպես **հավաքական գոյական**, այնպես էլ **հավաքական անուն** եզրույթները կամ էլ ուղղակի **հավաքական**:

2 Հմտ. **Պետրոսյան Հ. Զ.**, Գոյականի թվի կարգը հայերենում, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1972, էջ 70, **Պետրոսյան Հ. Զ., Գալստյան Ս. Ա., Ղարաբյուրյան Թ. Ա.**, նշվ. բառարանը, էջ 172:

3 **Աղայան Է. Բ.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., Հայկական ՍՍՀ ԳԿ հրատարակչություն 1967, էջ 249:

4 **Պետրոսյան Հ. Զ.**, Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան», 1987, էջ 158:

5 **Ասատրյան Մ. Ե.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևանի համալսարանի հրատարակչություն, Եր., 1970, էջ 119:

Ժ (ԺԶ) փայրի. թիվ 2 (62), ամբիլ-հունիս, 2018

ՎԿԻ համահայկական հանդես

կաններն այդ խոսքի մասի շրջանակում իմաստային-քերականական խումբ են⁶: Նաև կարծիք կա, թե եզակի և հոգնակի (երկակի և այլն) թվերից բացի «գոյություն ունի նաև թվի մի այլ արտահայտություն՝ այսպես կոչված հավաքական թիվ, և կան բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են առարկաների քանակը ոչ թե որպես եզակի (մեկ) կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես մի հավաքական ամբողջություն»⁷, ինչպես՝ ուսանողություն, տեսականի: Երբեմն դա անվանում են «հավաքական հոգնակի» (պապոնք, Գրիգորենք, Մաճկալանք, Վեդունք)⁸:

Իմաստային տեսանկյունից հավաքական բառը միասնություն է ցույց տալիս, հասկացական տեսանկյունից՝ բազմություն: Ի տարբերություն թվի կարգի՝ հավաքականությունը դրսևորում է հավաքականության ոչ թե քանակային, այլ ավելի շուտ որակական կողմը՝ առարկաների հավաքականության միասնությունը. հմմտ. հայ – հայեր – հայություն, մորթի – մորթիներ – մորթեղեն:

Հավաքականության իմաստը դրսևորվում է ինչպես պարզ (արմատական) բառերի միջոցով (ամբոյս, ազգ, բանակ և այլն), այնպես էլ ձևավորվում է հավաքականակերտ ածանցների (-եղեն, -ություն, -անի, -ստան և այլն) օգնությամբ:

Արդեն 5-րդ դարում հայերենն ուներ հավաքականակերտ այս մասնիկները՝ -ական (զօրական), -ան (ծիան), -անի (աւագանի), -եան (բերդեան), -եար / -որեար (բանեար «խոսքեր, բանավեճ, բանակո՞վ», ազատորեար «ազատանի, ազնվականներ, իշխաններ»), -նեար (նալկնեար «նավակներ»), -որեայ / որայ (արտորեայ, վանորայ), -տի / -ոտի (մանկտի, ոսկրոտի «ոսկորների ամբողջությունը»)⁹:

Կան եզակիաձև հավաքական և հոգնակիաձև հավաքական գոյականներ, որոնք «դուրս են եզակի-հոգնակի համարժեքային հակադրության ոլորտից»¹⁰:

Արդի հայերենում հավաքական գոյականը քերականական ձևավորմամբ մի դեպքում եզակի է, որ կարող է հոգնակի թվով գործածվել (ժողովուրդ – ժողովուրդներ, երամակ – երամակներ), մյուս դեպքում, հատկապես երբ բաղադրյալ կազմություն է (սպիտակեղեն, մտավորականություն, նամականի), անհոգնական է:

Հավաքականության իմաստ ունեցող բառերի մեջ տարբերակում են բուն հավաքական գոյականներ, որոնք «եզակի ձևով արտահայտում են հոգնակի թվի իմաստ և հենց հոգնակի ձևով էլ կարող են փոխարինվել»¹¹, ինչպես՝ ուսանողություն – ուսանողներ, հոգևորականություն – հոգևորականներ: Իրականում սրանք սերտորեն առնչվող, բայց իմաստաբանորեն և քերականորեն տարբեր իրողություններ են: Հավաքական գոյականն ամբողջություն

6 Տե՛ս Մարգարյան Ա. Ս., Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2004, էջ 66: Հետագա շարադրանքում դա համարում է «իմաստային քերականական կարգ» (էջ 73):

7 Աղայան Է. Բ., Լեզվաբանության ներածություն, Եր., «Միտք» հրատարակչություն, 1967, էջ 362:

8 Տե՛ս Պետրոսյան Հ. Զ., նշվ. բառարանը, էջ 158:

9 Հմմտ. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, Եր., Հայկական ՍՍԻ ԳԱ հրատարակչություն, 1957, էջ 529, Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, 4-րդ հրատ., Եր., «Լույս», 1976, էջ 20: Այդ մասնիկների մասին ասվում է, որ գործածվում էին «հավաքական կազմելու համար» (Հր. Աճառյան), «մեծ մասամբ արտահայտում են հավաքականության իմաստ» (Ա. Աբրահամյան):

10 Հմմտ. Պետրոսյան Հ. Զ., Գոյականի թվի կարգը հայերենում, էջ 72:

11 Տե՛ս Ասատրյան Մ. Ե., նշվ. աշխ., էջ 120:

և միասնություն է արտահայտում, իսկ գոյականի հոգնակին քերականական կարգ է, որը ցույց է տալիս մեկից ավելի նույն առարկաներ (չշեշտելով, իհարկե, միասնության կամ ամբողջականության գաղափարը): Մրանց քերականական տարբերակվածությունը երևում է նաև նախադասության մեջ, ենթակայի և ստորոգյալի համաձայնության միջոցով:

Հայերեն հավաքական գոյականների մեջ առանձնացրել ենք բառամատային մի խումբ, որի միավորները նշանակում են «հայերի հավաքական ամբողջություն», այլ կերպ ասած՝ դրանք հայ հավաքականության նշանակիչներն են: Կքնենք այն բառերը, որոնք ունեն հայ բաղադրիչը: «Հայեր», «հայ հավաքականություն» են նշանակում նաև գրաբարյան բառակապակցություններ, ինչպես՝ տուն Թորգոմայ, ցեղ Թորգոմայ, տոհմ թորգոմեան, ազգ արամեան և այլն, բառային միավորներ՝ հայկազունք, հայկեայք, թորգոմեանք, արամեանք, ասքանազեանք և այլն, սակայն դա այլ քննության նյութ է:

Ուշագրավ և գրավիչ է բացահայտել, թե բառային մակարդակում հայության առնչությամբ ինչպես է դրսևորվում արդեն հիշատակված «ամբողջության, միասնության, միավորվածության գաղափարը»: Կպարզենք, թե որոնք են այդ բառերը, երբ են ստեղծվել (կամ որոնք են մեզ հասած գրավոր առաջին վկայությունները), ինչ կազմություն և իմաստ(ներ) ունեն, ինչ բառերի հիմք են դարձել, կուրվագծենք դրանց բառարանային մշակման պատմությունը, կմատնանշենք հայերենի բառային ուրիշ միավորների հետ նրանց ունեցած բառաիմաստային կապերը:

Անդրադառնանք հայ հավաքականություն նշանակող բառային յուրաքանչյուր միավորի առանձին:

Հայք

Նոր հայկազյան բառարանում **հայք**-ը բացատրվում է «ազգ արամեան, որ ի Հայկայ թորգոմեան յաբեթեանց»¹², համանման է Ջախջախյանի բացատրությունը՝ «ազգ արամեան, սերեալն ի Հայկայ»¹³: Գրաբարի նորոքյա բառարանը երրորդ՝ գոյականի իմաստով նշում է «հայ ազգը, հայ ժողովուրդը»¹⁴:

Հայ բառի գրաբարյան հոգնակին է հայք՝ կազմված -ք հոգնակերտ մասնիկի օգնությամբ: Սակայն լեզվի զարգացման ընթացքում **հայք**-ը սուկ բառաձև չի ընկալվել: Խոսքաշարում հոգնակիի իմաստի հետ մեկտեղ քերականական ձևը ժամանակի ընթացքում որոշակիորեն կայունացել է, մասամբ վերաիմաստավորվել, և բառաձևն արտահայտում է նաև հավաքականության գաղափար՝ «հայություն, հայ ազգ»: Իմաստագործառական այս հատկանիշները հաշվի առնելով՝ հայք-ը մեր կարծիքով պետք է այս բառախմբի մեջ զետեղել¹⁵:

12 Հ. Գաբրիել Անտիոքեան, Կ. Խաչատուր Միրմելեան, Կ. Մկրտիչ Ազգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837, էջ 29 (այսուհետև՝ ՆՀԲ):

13 Հ. Մանուէլ վրդ. Ջախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, Վենետիկ, 1837, էջ 829:

14 Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի բառարան, հատ. Բ, եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2000, էջ 29:

15 Հետաքրքրական է, որ Հր. Աճառյանը հավաքականակերտ մասնիկների մեջ է դնում նաև հոգնակերտ -իկ-ը՝ մարդիկ (տես Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 3, էջ 529), թեև

Ավաճի օգտին է վկայում հետևյալ իրողությունը. 1960–1970–ականներին ակադ. Ա. Ս. Ղարիբյանի, այնուհետև Ա. Ա. Աբրահամյանի ղեկավարությամբ կազմված բնագրային համաբարբառներում, որոնք արտացոլում են 5–րդ դարի հայ պատմագրությունը, հայք–ը ներկայացվել է առանձին բառահոդվածով՝ իբրև բառույթ: Այսինքն՝ գրաբարի շրջանակներում քերականական ձևն ընկալվել է բառի արժեքով: Հմմտ. «Ամենայն հայք գկնի իւր միաբանեցին» (Եղիշէ), «Հայք սերտիւ մեր լինին» (Փարպեցի) և այլն¹⁶:

Հիշյալ համաբարբառներում փորձ է արվել գատելու հայք ժողովրդանունը և Հայք երկրանունը, թեև դա ոչ միշտ է հաջողվել, քանի որ նույն բառահոդվածի ներքո տրվել են թե՛ մեկի, թե՛ մյուսի բնագրային օրինակներ: Իսկ Փարպեցու համաբարբառում հայք գլխաբառի կողքին՝ փակագծերում, լրացուցիչ նշում կա՝ *ժող.*, այսինքն՝ «ժողովուրդ», որ հայերի հավաքական ամբողջությունն պիտի հասկանալ:

Համանման մոտեցում են դրսևորել արևմտահայերենի բացատրական բառարանները՝ գլխաբառ դարձնելով Հայք / հայք–ը¹⁷: Առաջին անգամ բացատրվել է «Հայաստան, հայեր»¹⁸, այնուհետև իմաստները սահմանազատվել են՝ «1. Հայաստան, 2. հայեր (գրաբար)»¹⁹, իսկ երկհատոր բացատրական բառարանում իմաստների դիրքը (մասամբ նաև ձևակերպումը) փոխվել է՝ «1. (գրաբար) Հայեր, 2. Հայերու բնական երկիրը, Հայաստան»²⁰: Բառարանային այս վկայակոչումները հավաստում են, որ նոր ժամանակներում հայք բառաձևն ընկալվում է նաև բառի արժեքով: Հոգնակիի հայք ձևն արդի հայերենին բնորոշ չէ, սակայն խիստ հազվադեպ տեսնում ենք պատմագեղարվեստական ստեղծագործություններում: Օրինակներ՝ «Եվ կայսրը կամենում է, որ **հայք** իզոտ, իրենից դուրս, ուրիշ բարեկամներ չփնտրեն» (Ստ. Ջորյան, «Վարազդատ»), «Եվ միթե ճշմարիտ է, թե անստանաւսեր են **հայք**» (Գ. Դերիկյան, «Վիրավոր կռունկ»)՝: Սրանք արդի գրական հայերենում հնարանություններ են:

ակնհայտ է, որ այն հոգնակիի սկզբնաձևն է:

16 Տե՛ս Հայկական համաբարբառ 3, **Փատտոսի Բուզանդացոյ** Պատմութիւն Հայոց, գիրք 2–րդ, կազմեց **Վ. Մ. Գևորգյան**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1976, էջ 320, Հայկական համաբարբառ 4/II, Ազաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, կազմեցին **Հ. Վ. Սարգսյան, Բ. Ա. Եգանյան**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973, էջ 16, Հայկական համաբարբառ 5, **Եղիշէի** Վասն վարդանայ և հայոց պատերազմին, գիրք Բ, կազմեց Լ. Ա. Գուլգազարյան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, էջ 57, Հայկական համաբարբառ 6, Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2–րդ, կազմեց **Ա. Ս. Սարգսյան**, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1978, էջ 269, Հայկական համաբարբառ 7, Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2–րդ, կազմեցին **Օ. Մ. Խաչատրյան, Ա. Գ. Բաղդասարյան**, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Եր., 1976, էջ 196:

17 Մի բառարանում **Հայք** է, մյուսներում՝ մեծատառերով՝ **ՀԱՅՔ**:

18 **Պետրոս վրդ. Ճիզվէճեան**, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, հատ. 2, Հալէպ, տպ. «Անի», 1957, էջ 799:

19 **Տէր Խաչատուրեան Արուս., Գանգրոնի Հր., Տօնիկեան Փ. Կ.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, «Կ. Տօնիկեան և որդիք», 1968, էջ 411: Ակադեմիական բացատրական բառարանը տալիս է «պատմ.» (պատմական) ոճական նշումը և բացատրում «Հայոց երկրի անունը» (տե՛ս **Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ**, Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 3, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1974, էջ 288):

20 **Գնել արք. Ճերէճեան, Տօնիկեան Փ. Կ., Տէր Խաչատուրեան Արուս.**, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրուք, «Կ. Տօնիկեան և որդիք», 1992, հատ. 1, էջ 1147: Ի դեպ, **Հայք** երկրանվան և **հայք** հասարակ անվան դեպքում գործ ունենք ոչ թե բազմիմաստության, այլ համանունության հետ: Արևելահայերենի բացատրական ընդարձակ բառարաններից ակադեմիականն ունի **ՀԱՅՔ** գլխաբառը, սակայն միայն «հայոց երկրի անունը» բացատրությամբ (հատ. 3, էջ 288):

21 Արևելահայերենի ազգային կորպուս (www.eanc.net):

Հայեար

Հայեար գլխաբառ ՆՀԲ-ն չունի, կա Առձեռն բառարանում, որտեղ նշվում է ձևաբանական արժեքը՝ գոյական, իմաստը՝ «հայեր»²²:

Հայերենի զարգացման հնագույն շրջանում -ք հոգնակերտի գործածությունը սահմանափակվում է հավաքական-հոգնակերտ մասնիկների²³ տարածմամբ, ինչպես՝ -ունք, -եար, -ուի, -(n)տի, -անի, -ստան, -որ(ե)այ(ք): Դրանցից -եար-ը նախագրային փուլի համար բնութագրվում էր տարածքային սահմանափակումներով. թեև հնարավոր չէ նշել նրա գործողության հնագույն տարածքները, բայց կարելի է ասել, որ այն ընդգրկել է կենտրոնական շրջանները՝ 5-րդ դարի դասական հայերենի հուշարձաններում արդեն ունենալով ես > ե փոփոխությամբ պայմանավորված -եր տարբերակը²⁴, ինչպես՝ բանեար - բաներ: Այդպես էլ հայեար - հայեր, որ ունի Փարպեցին. «... *յրեսեալ Նիխորոյ զՀայերն ուրախացաւ*», «*Ես ընդ Վահանայ և ընդ այլ Հայերդ ոչ եթէ ներիս կոռսիմ, այլ*»²⁵:

ՆՀԲ-ի հայ բառահոդվածում գետեղվել է նաև հայեր «հայ մարդիկ» միավորը, որը ծագել է հայեար-ից: Այսօր արդեն հայության ներկայացուցիչներին հոգնակիով անվանում են բացառապես հենց այդ հայեր ձևով:

Հայորեար

Հայորեար բառը ՆՀԲ-ն բացատրում է «հայ մարդիկ. արք ազնուականք ի հայոց», սեռական հոլովը՝ հայորերոյ²⁶ (հատ. Բ, էջ 32): Առձեռն բառարանը բառիմաստը հակիրճ ձևակերպում է այսպես՝ «հայ մարդիկ. գլխաւորները» (էջ 469): Հմմտ. որեար «այն մարդիկ», ազատորեար «ազնվականներ, իշխաններ»:

Կազմված է հայ և որ (դերանուն) արմատներից, հավաքականանիշ -եար մասնիկից: Գործածվել է Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց» երկում. «*Եւ ժողովեալ ամենայն Հայորերոյն առ Սամիկոնեանն Վահան*», «*Եւ քունեալ լսել Սամիկոնեանին ամենայն հայորերոյն միահամուռ զպարզամն Նիխորոյ*»²⁷:

Տակավին 5-րդ դարում հավաքականության ենթակարգը զգալիորեն ծավալվեց: Հիմնական խթանը սա էր. հավաքականը վերացնում էր այն շփոթությունը, որ սկսել էր նկատվել անեզական բառերի գործածության մեջ. այսպես՝ վանք՝ եզակի կամ հոգնակի, բայց վանեար՝ «իբր հավաքական հոգնակի»²⁸: Այդպես էլ հայորեար-ը՝ իբրև իմաստային-քերականական տարբերակման միջոց:

22 Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Բ տպագր., Վենետիկ, 1865, էջ 468:

23 **Հավաքական-հոգնակերտ մասնիկ** եզրույթը Գ. Զահուկյանին է (տե՛ս **Զահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1987, էջ 375-376): Հարադրական գիտաբառի միջոցով դրսևորվում է հավաքականակերտ մասնիկների երկակի բնույթը. մի կողմից նրանք հավաքականներ են կազմում, մյուս կողմից՝ հոգնակիի գաղափար արտահայտում:

24 Տե՛ս **Զահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 375:

25 Հայկական համաբարբառ 6. **Ղազարայ Փարպեցու** Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 263:

26 Հր. Աճառյանը նկատում է, որ -եար մասնիկը կրճատվելով դարձավ -եր (անշուշտ -երոյ, -երով հոլովված ձևերի ազդեցությամբ, որոնց մեջ ա-ի կորուստն օրինաչափական է) (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 534):

27 Հայկական համաբարբառ 6. **Ղազարայ Փարպեցու** Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 266:

28 **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 531:

Հայաստան

Հայաստան–ը ՆՇԲ–ում ներկայացված է երկու արժեքով: Գոյականի արժեքով այն նշանակում է Հայք (հղում է արվում հատուկ անունների բառացանկին), իսկ իբրև ածական՝ «հայկական, արամեան, թորգոմեան»։ «Գիրս նշանագրոց **հայասրան ազգիս**» (Կորյուն)²⁹ (ՆՇԲ, հատ. Բ, էջ 30): Կազմում է բաղադրյալ անուններ՝ Հայաստան աշխարհ և Հայաստան երկիր: Ուշագրավ են հատկապես հայաստան ազգ և հայաստան ազինք³⁰ բառակապակցությունները (կան բառահոդվածի տրված բնագրային նմուշներում), որոնք «հայեր» են նշանակում:

Հայաստան բառը Ղազար Փարպեցին այս արժեքով (և իմաստով) գործածել է մեկ անգամ. «... պաշտօն եկեղեցւոյ և կարդացմունք գրող ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս **Հայասրան ժողովրդոց**»³¹: Այստեղ Հայաստան–ը երկիր չի նշանակում, այլ ուղղակի հայ³², այսինքն՝ «հայերի եկեղեցիներում և վանքերում»:

Մովսես Խորենացին ևս կիրառել է մեկ անգամ՝ «Իսկ թագաւորն Տրդատ ամենայն **Հայասրանօք իջեալ ի դաշտն Գարգարացոց՝ պարսահէ հիւսիսականացն ճակարտս պարտրազմի**»³³, որ աշխարհաբար թարգմանվել է «Հայաստանի բոլոր գորքերով»³⁴: Վ. Առաքելյանը այս կապակցությամբ գրում է, որ «պետք է փոքրատառ գրվեր և թարգմանվեր հայերով: Ուրեմն Հայաստան այստեղ էլ երկիր չի նշանակում»³⁵:

V դարի այս օրինակներում տեսնում ենք, որ «հայ+աստան» կազմութեամբ բառը որոշ դեպքերում ոչ թե երկրանուն է նշանակել, այլ պարզապես «հայեր՝ հայ հավաքականություն՝ հայություն»: Մինևույն ժամանակ հարկ է արձանագրել, որ տարածված կիրառություն չէր:

Պարզաբանենք հավաքականության իմաստը՝ դիտարկելով բառի մասնիկային –ստան բաղադրիչը: Հր. Աճառյանն իրանյան ծագում ունեցող –ստան–ի³⁶ մասին գրում է (հղելով գերմանացի հայագետ Յ. Կարստին), որ այն հին հայերենի –աստան տեղանիշ մասնիկն է³⁷, որը վերածվել է հոգ–

29 Հմմտ. «... ի գիրս նշանագրաց **Հայասրան ազգին հասանել**» (տե՛ս Հայկական համաբարբառ 2, **Կորին** «Վարք Մաշտոցի», կազմեց Է. Դեմիրճյան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1972, էջ 133): Նույն իմաստի համար հմմտ. նաև «Եւ յաղթահարէր զգօրսն Պարսից գունդն **հայասրան**» (տե՛ս Հայկական համաբարբառ 3, **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, գիրք 2–րդ, էջ 310):

30 Տե՛ս նաև **հայաստան տուն** (տե՛ս Խ. Մանուէլ վրդ. **Զախախտան**, նշվ. բառարանը, էջ 829):

31 Հայկական համաբարբառ 6. **Ղազարայ Փարպեցւոյ** Պատմութիւն Հայոց, գիրք 2–րդ, էջ 264:

32 Տե՛ս **Առաքելյան Վ. Գ.**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981, էջ 104:

33 **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական քննադիր և ներածությունը Մ. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Եր., Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1991, էջ 230:

34 **Մովսէս Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, Եր., «Հայաստան», 1968, էջ 221:

35 Տե՛ս **Առաքելյան Վ. Գ.**, նշվ. աշխ., էջ 104:

36 Ա. Ղարիբյանը կարծում է, որ կապ չկա տեղանիշ –ստան–ի հետ. ս–ն հայցականի մասնիկն է (հոգն. ուղղականի ք–ից), որին ավելանում են –տ և –ան մասնիկները, ինչպես՝ բաղնիք – բաղնիս – բաղնեստան = բաղնիքներ (տե՛ս **Ղարիբյան Ա. Ս.**, Հայ բարբառագիտություն, Եր., Հայկական ՍՍԻ պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, 1953, էջ 138):

37 Գ. Զահուկյանն այս մասնիկի մասին գրում է, որ իրանյան ծագում ունեցող այս ածանցը «հավանաբար դեռ հնագույն հայերենի նախագրաբարյան փուլում պիտի բավական տարածված լիներ հավաքական–տեղանիշի արժեքով՝ **այգեստան, անդաստան, ձիթաստան** «ձիթենիների տեղ. ձիթենիներ» և այլն. այս ածանցը աստիճանաբար դուրս է մղում նաև երկրներն ըստ ժողովուրդների կոչելու (Հայք «հայեր. Հայաստան») հին սովորույթը և առաջ բերում տարբերակում՝ **Հայաստան, Մարաստան** (հմմտ. նաև **Մարաց աշխարհ**) և այլն» (տե՛ս **Զահուկյան Գ. Բ.**, նշվ. աշխ., էջ 376):

նակերտի³⁸: Անցումը կատարվել է այգեստան, ձիթաստան, ծառաստան և նման բառերի միջոցով, «որոնց մեջ առարկաների բազմությամբ գտնվելու տեղը նույնիսկ բազմության մտքով է առնված, որով և հավաքականի է վերածված», իսկ «հավաքական և հոգնակի -տան մասնիկի հարաբերակցությունը կարելի էր տեսնել հատկապես Հայք - Հայաստան, Մարք - Մարաստան, Վիրք - Վրաստան, Պարսք - Պարսկաստան, Հնդիկք - Հնդկաստան և նման բառերի մեջ, որոնցից կարելի էր հետևեցնել, թե ստան=ք»³⁹:

Հավաքականության իմաստ արտահայտող Հայաստան (հայաստան) ազգ / ժողովուրդ կապակցությունները, որ գրաբարում իսկ սահմանափակ կիրառություն ունենին, չփոխանցվեցին հայերենի զարգացման հաջորդ փուլերին:

Հայաստանեայք

Հայաստանեայք բառը ՆՀԲ-ն ներկայացնում է գոյականի արժեքով՝ «բնակիչք կամ ազգ Հայաստան աշխարհի. հայք⁴⁰» (հատ. Բ, էջ 30): Առձեռն բառարանը, ի տարբերություն ՆՀԲ-ի, բացատրում է բացառապես հոգնակի ձևերի միջոցով՝ «հայաստանցիք, ազգք և բնակիչք Հայոց աշխարհին» (էջ 468):

Մալխասյանցի բառարանում տրված բացատրությունը հայկազյան բառարանների նյութի համադրումը կարծեք լինի՝ «Հայաստանի բնակիչներ, հայ ժողովուրդ, հայ ազգ»⁴¹: Ստ. Մալխասյանցը գոյականից բացի բառին վերագրել է նաև ածականի արժեք: Ամենայն հավանականությամբ բառարանագիրն այս որոշումն ընդունելու համար նկատի է ունեցել հատկապես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի անվանումը, որ կենսունակ է դարձել ի վեր: Համարժեք Հայ (կամ Հայոց) առաքելական եկեղեցի անվանումները հուշում են, որ առաջին՝ Հայաստանյայց բաղադրիչը կարող է ածականի արժեքով ընկալվել: Հմնտ. «... ի մայր եկեղեցեացն ամենայն **հայաստանեաց**» (Բուզանդ)⁴², «Ողորմիմ քեզ, եկեղեցի **հայաստանեայց**, խորթնացեալ ի բարեզարդութենէ բեմին...» (Խորենացի)⁴³:

Հայաստանեայք բառին ձևաիմաստային և գործառական առումով համեմատելի են Հայաստանեաց աշխարհ / երկիր և Հայաստան աշխարհ / երկիր բառակապակցությունները:

Գործածվել է 5-րդ դարի հայերենում: Սեռական հոլովը լինում է Հայաստանեայց կամ Հայաստանեաց, հայցականը՝ զՀայաստանեայս, գոր-

38 Հին հայերենում -ստան-ը կազմում է «բաղադրյալ բառեր, որոնք նշանակում են առարկաների հավաքման կամ գտնվելու տեղը». «տեղի իմաստը հեշտությամբ դառնում է հավաքական», և «վերջավորությունն սկսում է նշանակել առարկաների բազմություն, որոնք հավաքված են մի տեղում» (տես **Կարստ Յ.**, Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, գերմ. թարգմ. **Գմ. Ալիվյանկ**, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002, էջ 191):

39 Տես **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 713:

40 Ջախջախյանն ավելացնում է «հայաստանցի», իբր ռամկորեն (տես նշվ. բառարանը, էջ 829):

41 **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Եր., Հայկական ՍՍԻ պետական հրատարակչություն, 1944, էջ 37: Ռ. Ղազարյանը նույնությամբ կրկնում է Մալխասյանցին (տես **Ղազարյան Ռ. Ս.**, նշվ. բառարանը, էջ 29):

42 Հայկական համաբարբառ 3, **Փաստոսի Բուզանդացու** Պատմություն Հայոց, գիրք 2-րդ, էջ 311:

43 Հայկական համաբարբառ 7, **Մովսիս Խորենացու** Պատմություն Հայոց, գիրք 2-րդ, էջ 181:

ծիականը՝ Հայաստանեօք (կոչականը՝ ո՛վ Հայաստանեայք)⁴⁴: Լմնտ. «Մուշեղ զօրավարն **հայասրանեաց շրջէր ընդ երկիրն**» և «... բանի Շապիոյ արքայի գայր հասանէր ... րալ պարերազմ ընդ **հայասրանեայսն**» (Բուզանդ)⁴⁵, «Այս Հայկ որդի Թորգոմայ ... նախնի **Հայասրանեայց**» և «Որոց պարահեալ քաջին Արշարի Կամասրականի հանդերձ ամենայն **Հայասրանեայցս զօրու...**» (Խորենացի)⁴⁶:

Բառի կազմությունը՝ Հայաստան երկրանուն, բաղադրյալ –եայք մասնիկը (–եայ+ք), մասնիկի համար հմնտ. աղախն(ե)այք, միջերկր(ե)այք, արուարձան(ե)այք:

Ձևախմբատային առունով համեմատելի է գրաբարյան հրէաստանեայք «հրեաներ» և ասորեստանեայք «ասորեստանցիներ» բառերին:

Հայակոյտ

Հայակոյտ բառը ՆՀԲ-ն ներկայացնում է ածականի արժեքով՝ «կուտեալ ի հայազանց. ժողովեալ ի հայոց ազգէն» և ներկայացնում հինգերորդ դարից միակ վկայությունը՝ «Նահարարք **հայակոյր զօրացն**» (Ագաթ.)⁴⁷ (հատ. Բ, էջ 30): Նույն արժեքով և «հայոցմէ խումբ եղած» իմաստով տրված է նաև Առձեռն բառարանում (էջ 468): Ս. Ղազարյանի բառարանը «հայերից խմբուած՝ կազմված» բացատրությանն ավելացնում է հայախումբ հոմանիշը (հատ. Բ, էջ 29):

Ամենայն հավանականությամբ բառը ստեղծել է Ագաթանգեղոսը կամ էլ նրա միջոցով է փոխանցվել մեզ⁴⁸: Գրաբար խոսքում գործածել են ուրիշներ ևս, միջնադարում և նոր շրջանում, ինչպես՝ «Եւ յայն պարերազմի ոչ փոքր ինչ քաջութին գործեալ **հայակոյր զաւրացն...**»⁴⁹ (Սեբեոս, 7-րդ դար) և «... խօսեսցին զինքեանց առ անաշատարես միտս և առ վեհագունիցն **հայակոյր քերթողական որերոյն...**»⁵⁰ (Արսեն Բագրատունի, 19-րդ դար): Նաև աշխարհաբար՝ «... դատնանք եղածին, և դիմացնիս կեցած մեր **հայակոյր բանակին**» (Ղ. Ալիշան)⁵¹: Կրկին ածականական կիրառություններ են:

Ստ. Մալխասյանցի բառարանում հայակոյտ–ից հղում է արվում վերո–

44 Տե՛ս Մխիթար Աբրահայր, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 33:

45 Տե՛ս Հայկական համաբարբառ 3, Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 311:

46 Հայկական համաբարբառ 7. Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, գիրք 2-րդ, էջ 181-182:

47 Տե՛ս նաև Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983, էջ 30:

48 Լմնտ. Առաքելյան Վ. Գ., նշվ. աշխ., էջ 153-154: Լեզվաբանը գրում է, որ Ագաթանգեղոսը «մեր գրական լեզուն հարստացրեց առտնին, մեր առօրյա գործածելի բազմաթիվ բառերով, որոնց կյանքը հարատևում է մինչև այսօր» և բերում **համբերատար, հայրական, հանգստարան, հաստատական, հեղձուցիչ** և բազմաթիվ այլ օրինակներ: Այդտեղ **հայակոյտ**-ի ընդգրկումն այնքան էլ ճիշտ չենք համարում:

49 Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1979, էջ 95: Հետաքրքրական է, որ Սեբեոսի գործածած **հայակոյտ**-ը արևելահայերեն թարգմանության մեջ չի պահպանվել. հմնտ. «Այդ պարերազմում **հայկական զորքերը քիչ քաջություն չգործեցին**» (տե՛ս Սեբեոս, Պատմություն, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Եր., «Ջանգակ», 2005, էջ 394): Ագաթանգեղոսի երկի պարագայում այդպես չէ. հմնտ. «**Հայակոյտ** զորքի մեծամեծները...» (տե՛ս Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն», աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1983, էջ 31):

50 Պոբլիոսի Վիրգիլիայ Մարովսի Մշակականք, Վենետիկ, 1847, էջ 32 (հայր Արսեն Բագրատունու «Ցառաջաբանը»):

51 Ղևոնդ Ալիշան, «Յուշիկք հայրենեաց Հայոց», հատ. Ա, Վենետիկ, 1869, էջ 245:

հիշյալ հայախումբ-ին (հատ. 3, էջ 36), որը ներկայացված է երկու արժեքով (գոյ. և ած.): Գոյականի իմաստը հիմք է տալիս հայակոյտ-ը ևս ընդգրկելու հայ հավաքականությունն նշանակող բառերի խմբում:

Նշենք, որ արևելահայերենի և արևմտահայերենի բացատրական ընդարձակ բառարաններում նշված միավորը գլխաբառ չի դարձել առհասարակ⁵²: Հովհ. Բարսեղյանի ուղղագրական բառարանը հայակոյտ-ն արձանագրել է *հնց.* (հնացած) նշումով⁵³:

Հայախումբ

Հայախումբ բառը գրաբարի և միջին հայերենի բառարաններում վկայված չէ: Աշխարհաբարյան կազմություն է, սկզբնապես գործածվել է ածականի արժեքով: Օրինակներ՝ «... շար **հայախումբ** քաղաքներ, գիղեր և աւաններ կղապարկուին...»⁵⁴, «... լավեցավ հանկարծ **հայախումբ** գորքերի որոտագին աղաղակը»⁵⁵:

Բառն ընդգրկել ենք «հայ հավաքականություն» բառաիմաստային խմբում, քանի որ այն ձեռք է բերել նաև գոյականի արժեք. այդ են վկայում հայերենի բառարանները: Այսպես: Ստ. Մալխասյանցի բառարանում հայախումբ-ը ներկայացվել է երկու արժեքով՝ 1. գոյ. «հայերից կամ հայ մարտիկներից կազմված խումբ», և 2. ած. «որտեղ խմբված են հայեր», հայախումբ բազմութիւն ցուցադրական նմուշով (հատ. 3, էջ 36): «Ժամանակակից հայոց լեզվի բառարանը» ևս նշում է երկու արժեք, սակայն առաջին՝ գոյականի իմաստը ներկայացնում է առանց «հայ մարտիկներից» բառակապակցությամբ, այսինքն՝ «հայերից կազմված խումբ», երկրորդ իմաստը՝ «հայերից կազմված, հայերից բաղկացած»՝ Մալխասյանցից վերցված բառակապակցությամբ՝ հայախումբ բազմություն (հատ. 3, էջ 281):

Բառը կա նաև Էդ. Աղայանի բառարանում, որտեղ նշվում են քերականական ձևեր՝ *հայախմբի, հայախմբեր*⁵⁶, թեև դրանց գործածությունը, ըստ մեր որոնումների, վկայված չէ գրական վկայություններով⁵⁷:

Հայախումբ գլխաբառ ունի (գոյականի և ածականի արժեքների նշումով) Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանը, որտեղ տրված են հենաբառի հայակոյտ և հայաժողով հոմանիշները⁵⁸: Հայախումբ-ն այստեղ դիտվել է հնացած (*հնց.*): Իր հաջորդ բառարանում Սուքիասյանը կրկին նշում է բառի երկարժեքությունը, սակայն բառն արդեն համարում է հազվադեպ (*հզվդ.*)՝ տալով ընդամենը մեկ հոմանիշ՝ հայակոյտ⁵⁹: Իրականում այն թե՛ հնացած է և թե՛ հազվադեպ:

Արևմտահայերենի բացատրական բառարաններում հայախումբ-ը չի

52 Եվ դա արդարացված է, քանի որ աշխարհաբարում բառը չի գործածվել: Արևելահայերենի ազգային կորպուսում (110 միլիոն բառագործածությամբ) բնագրային ոչ մի օրինակ չկա (տես www.eanc.net):

53 Բարսեղյան Հ.Խ., Հայերեն ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Եր., «Լույս», 1973, էջ 538:

54 «Արարատ» ամսագիր, Էջմիածին, 1877, թ. Ը, էջ 285

55 Մուրացյան, «Գևորգ Մարգպետունի», Եր., «Լույս», 1982, էջ 338:

56 Տես Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան», 1976, էջ 810:

57 Հմմտ. eanc.net (արևելահայերենի ազգային կորպուս):

58 Տես Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1967, էջ 361:

59 Տես Սուքիասյան Ա. Մ., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 581:

արձանագրվել արդի փուլում անգործածական լինելու պատճառով:

Հայագունդ

Հայագունդ բառն արձանագրված չէ գրաբարի և միջին հայերենի բառարաններում: Ամենայն հավանականությամբ 18-րդ դարի առաջին կեսի կազմությունն է. «*Եւ դէպ եղև յաւուրսն յայնսոսիկ Յոհաննէս պէտրն Գուգարացոց գալ ի կողմանս յայնսոսիկ յիսուն և վեց հազար հայագունդ գորօք*»⁶⁰: Ընդհանուր հայերեն բառ է:

Սկզբնապես գործածվել է ածականի արժեքով, հետագայում ձեռք է բերել նաև գոյականի արժեք, դրա համար էլ ընդգրկել ենք հայ հավաքականություն նշանակող բառերի խմբում: Ահավասիկ գոյականական արժեքով կիրառվելու արևմտահայերեն և արևելահայերեն մեկական օրինակ՝ «*Նոյն արեն հարաւային հայագունդ մ'ալ հեռուէն երկինքէն խրկուած կ'երևար*»⁶¹, «*Հայոց աշխարհի խաղաղության համար մարտնչող նախարարների ու «աշխարհագոր» հայագնդի կողքին...*»⁶²:

Միանգամայն ճիշտ է վարվել Ստ. Մալխասյանցը՝ իր բառարանում հայագունդ-ը ներկայացնելով խոսքիմասային երկու արժեքով: Իմաստից՝ «գունդ՝ հայ զինուորներից բաղկացած», առաջնային է ընկալվում գոյականի արժեքը (հատ. 3, էջ 36): Ակադեմիական բացատրական բառարանը բառի երկարժեքությունն ավելի ձկուն է ներկայացրել՝ «հայերից կազմված» (գունդ՝ գորօք)⁶³, տալով նաև բնագրային մեկ օրինակ՝ «*Ինքը մնաց այն հայագունդ այրուծիի թվում, որ պահված էր Տիգրնոսն*» (Բաֆֆի) (հատ. 3, էջ 281): Հայ-ռուսերեն բառարանը **հայագունդ** -ի դիմաց որևէ արժեք չի նշել, այլ տվել է միայն սեռական հոլովի ձևը՝ *գնդի*, բացատրությունն էլ ներկայացնում է միայն գոյականի արժեքը՝ Армянский полк:

Արևմտահայերենի բացատրական բառարանները չեն արձանագրել հայագունդ բառը, սակայն այն կա թարգմանական մի բառարանում՝ «Armenian bodyguard, composed of Armenians» թարգմանությամբ և «գոյական» նշումով⁶⁴:

Բացատրական բառարանները ոճական որևէ նշում չեն տվել, Հովհ. Բարսեղյանն իրավացիորեն նշել է, որ հնացած է:

Հայություն

Հայություն բառը ՆՀԲ-ն բացատրում է այսպես՝ «հայոց ազգէ կամ արամեան գոլն. հայք. արամեանք» և բնագրային երկու օրինակ ներկայացնում (Ստեփանոս Ասողիկից և Զաքարիա Ծործորեցուց)՝ «*Թողու զհաւաւրս հայրենի հայութեան*» և «*Մի հաւար և մի օրէնք ունէին հայութիւն*» (հատ. Բ,

60 Ստեփանոս Ծառումեան, «Դաւիթ Բէգ», Վաղարշապատ, 1871 և Գուկաս Սեբաստացի, «Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Գափանցոց», աշխատասիրեց հ. Սամուէլ վրդ. Արամեան, Վենետիկ, 1978, գլ. Զ: 1736-37-ին Ստեփանոս Ծառումեանը պատմել է 1722 թ. ապստամբության մասին, իսկ Գուկաս Ստեփանյան Սեբաստացին գրի է առել:

61 «Եւրոպա» (Վիեննա), 1852, N 18, էջ 71:

62 «Էջմիածին», 1974, Գ, էջ 13:

63 Էդ. Աղայանը կրկնում է ակադեմիական բառարանին (էջ 810), սակայն փակագծերը հանում է, ըստ որի ածականական արժեքը չի ներկայացվում:

64 Տե՛ս Գոյումեան Մ. Գ., Ընդարձակ բառարան հայերէնէ անգլիերէն, Պէրյուք, տպ. «Ատլաս», 1970, էջ 398:

էջ 32): Առձեռն բառարանը փոքր-ինչ պարզեցրել է բացատրությունը՝ «հայ ըլլալը ազգով, Հայք, Արամեանք» (էջ 469): Բառի կազմության ժամանակը հաշվի առնելով և հիշյալ հղումներին ավելացնելով Գրիգոր Տղային՝ Նորայր Բյուզանդացին հայությունը զետեղել է հին հայերենին հաջորդող շրջափուլի՝ միջին հայերենի բառարանում⁶⁵:

Ածանցավոր կազմություն է, բաղադրիչներն են հայերի հայ ինքնանվանումը և հայերենի ամենակենսունակ վերջածանցը՝ -ություն, որով հիմնականում վերացական գոյականներ են կազմվում: Ածանցի գործառույթներից մեկն էլ ածական և գոյական հիմքերից հավաքական գոյականներ կազմելն է. ածական հիմքերից, որոնք «անվանական իմաստ կամ կիրառություն են ստացել» (բուսականություն, զինվորականություն), և գոյական հիմքերից (ուսուցչություն, ուսանողություն, հայություն)⁶⁶: Հաճախ բառակազմական հիմքի երկու (գոյ. և ած.) արժեք կարելի է նշել, ինչպես՝ ազնվականություն (< ազնվական), հոգևորականություն (< հոգևորական), նաև հայ և այլն:

Տեսակետ կա, որ արդի հայերենի բուն հավաքական գոյականները -ություն վերջածանցով կազմվածներն են, որոնք հավասարազոր են հոգնակիի ձևերին⁶⁷, հմնտ. ազնվականություն - ազնվականներ: Թեպետ նույն ձևով կարող ենք հակադրել այնպիսի հավաքականներ, որոնք -ություն ածանցով չեն կազմվել, ինչպես՝ նամականի - նամակներ, ավագանի - ավագներ, դեղորայք - դեղեր և այլն:

Դասական գրաբարում -ություն վերջածանցով հավաքականներ չեն կազմվել. բառակազմական այդ նշանակությունը և կիրառությունը հետագա շրջանների իրողություն է⁶⁸: Օրինակ՝ երիտասարդություն, որն այսօր նաև հավաքականության իմաստ է արտահայտում, 5-րդ դարի հայերենում նշանակում էր միայն «երիտասարդական վիճակ և հասակ. կտրիճ հասակ» (ՆՀԲ, հատ. Ա, էջ 684):

-ություն ածանցով ազգերի անուններից հավաքականներ սովորաբար չեն կազմվում: Բացառություն են բառարանային գրանցում ունեցող հրեություն «հրեա ժողովուրդը», թրքություն «թուրքերի հավաքական ամբողջությունը» և տաճկություն «տաճիկ ժողովուրդն իբրև ամբողջություն, թրքություն», ինչպես նաև խիստ հազվադեպ ռուսություն «ռուս ժողովուրդը»⁶⁹ և վրացություն «վրաց ժողովրդի ամբողջությունը» հավաքականանիշները, որոնք հայություն բառի համեմատությամբ շատ ավելի ուշ կազմություններ են⁷⁰: Այս գործառույթի սահմանափակ իրացումը մեր կարծիքով բացատրվում է տվյալ իմաստը դրսևորելու հասարակական պահանջի բացակայությամբ, ինչպես նաև կազմվելիք բառերի անբարենիչությամբ:

65 Տես **Նորայր Ն. Բիւզանդացի**, Բառագիրք ստորին հայերէնի ի մատենագրութեանց ժԱ-ԺԷ դարուց, հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 2000, էջ 410:

66 Տես **Գալստյան Ս. Ա.**, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1978, էջ 169, 171: Սա լեզվաբանական թերևս միակ աշխատությունն է, որտեղ -ություն ածանցով կազմված հավաքական գոյականների շարքում բերվում է **հայություն** բառի օրինակը:

67 Տես **Ասատրյան Մ. Ե.**, նշվ. աշխ., էջ 121:

68 Հայերենում հավաքական կազմելու գործառույթով -ություն ածանցի կիրառման տարածումը տեղի է ունեցել եվրոպական լեզուների հետևողությամբ (տես **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 529):

69 Հմնտ. «... ազրբեջանցիներն ու վրացիները անվերապահ կրիվ էին հայրաբարեղ հյուսիսին՝ խորհրդային թե կամավորական Ռուսաստանին, առհասարակ, **ռուսության**» (տես **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 366):

70 Կա եզակի գործածությամբ հայտնի **պարսկություն**, որը, սակայն, հավաքականություն չի նշանակում, այլ «պարսիկ լինելը, պարսից հավատի կրողը»:

Հայերենի բացատրական բառարաններում հայություն բառի բովանդակային կողմը տարբեր կերպ է ներկայացվում.

ա) միայն «ազգությամբ հայ լինելը» իմաստով (Ս. Գաբամաճյան)⁷¹,

բ) երկու իմաստով՝ «հայ լինելը, հայ ազգին պատկանելը» և «բովանդակ հայ ազգությունը, ամբողջ հայ ժողովուրդը» (Ստ. Մալխասյանց և ուրիշներ)⁷²,

գ) միայն «հայ ազգը» իմաստով (Պետրոս վրդ. Ճիզմեճյան)⁷³,

դ) չորս իմաստով՝ 1. «հայ լինելը», 2. «հային հատուկ սովորություններին՝ հատկությունների ամբողջությունը, հայի բնավորություն», 3. «հայեր»⁷⁴, 4. «հայ ազգը» (վերջին երկու իմաստները՝ *հավաքական* նշումով) (Էդ. Աղայան)⁷⁵:

Ինչպե՞ս զանազանել էդ. Աղայանի տարբերակած 3-րդ և 4-րդ իմաստները: Բառարանագիրը հավանաբար նկատի է ունեցել, որ երկուսն էլ հավաքականություն են արտահայտում, սակայն ընդգրկման տարբեր չափերով. մեկը՝ հայերի ինչ-որ քանակ (կարևոր չէ՝ շատ թե քիչ), մյուսը՝ ամբողջ հայ ազգը:

Այս առումով ուշագրավ է Անդրանիկ վրդ. Կռանյանի բառարանի «հայերու ամբողջություն» բացատրությունը⁷⁶: Այդ «ամբողջություն» ասվածը հենց հայ հավաքականությունն է՝ մեծ կամ փոքր, ինչպես և ամբողջ՝ համազգային ընդգրկումով:

Այսպիսին է բացատրական բառարաններում հայություն բառի բառարանագրման պատմությունը: Այդ պատմությանը հարկ է ավելացնել այն, որ հայություն բառը չի արձանագրվել հայերենի բացատրական որոշ բառարաններում⁷⁷:

Հայություն հավաքականանիշը բառակազմական մեծ ներուժ ունի և մեծաթիվ հավաքականների կազմության հիմք է դարձել: Բառերի առաջացման երկու ուղի կարող ենք նշել:

ա) Հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունների տևական գործածությունից հետո իրականացվել է բառակազմական քայլ, ինչպես՝ գավառ(ներ)ի հայություն – գավառահայություն, սփյուռքի հայություն – սփյուռքահայություն, Բրազիլիայի հայություն – բրազիլահայություն և այլն:

բ) Կամ էլ –ություն հավաքականակերտն ավելացել է հայ վերջնաբաղադրիչով երկարժեք (ած./գոյ.) բառին, ինչպես՝ արևելահայ – արևելահայություն, գաղութահայ – գաղութահայություն, ռումինահայ – ռումինահայություն և այլն:

գ) Հազվադեպ բառերն առաջացել են որոշիչ-որոշյալի կապակցություն-

71 Տե՛ս Գաբամաճյան Ս., Նոր բառագիրը հայերեն լեզուի, Կ. Պոլիս, տպ. Ռ. Սազանյան, 1910, էջ 774:

72 Տե՛ս Մալխասեանց Ստ., նշվ. բառարանը, հատ. 3, էջ 39, նույնը՝ Գնել արք. Ճերէճեան, Տօնիկեան Փ. Կ., Տէր Խաչատուրեան Արտ., նշվ. բառարանը, հատ. 1, էջ 1142: «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» գրեթե նույնն է ասում՝ «ամբողջ հայ ազգը, ամբողջ հայ ժողովուրդը» (հատ. 3, էջ 288):

73 Տե՛ս Պետրոս վրդ. Ճիզմեճեան, նշվ. բառարանը, հատ. 2, էջ 797:

74 Համեմատենք Ռ. Ս. Ղազարյանի «Գրաբարի բառարանում» տրված բացատրությունը՝ «հայ լինելը, հայ ազգին պատկանելը» և *հավաքական* «հայեր» (էջ 30):

75 Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. բառարանը, էջ 815:

76 Անդրանիկ վրդ. Կռանեան, Գործնական բառարան հայերեն լեզուի, Պէյրոս, «Շիրակ», 1970, էջ 247:

77 Տե՛ս [Հիրսիզեան Ե.], Բառգիրը յաշխարհաբառէ ի գրաբառ, Վենետիկ, 1869, Տէր Խաչատուրեան Արտ., Գանգրունի Հր., Տօնիկեան Փ. Կ., նշվ. բառարանը, Քերովբեան Գ., Հայերեն բառգիրը աշխարհաբար լեզուի, Ստամբուլ, «Արաս», 2011 և այլն:

ներից, ինչպես՝ իսլամաց(վ)ած հայություն – իսլամահայություն և այլն:

Բառերի ստեղծման հիմքում գերազանցապես ընկել են հայ ժողովրդի պատմության հայտնի իրողություններ: Այդ բառերը ցույց են տալիս հայության ողջ բազմազանությունը՝ պատմական, աշխարհագրական, հասարակական, կրոնական:

Հայաստանը դարեր շարունակ բաժանված է եղել երկու մասի⁷⁸, ձևավորվել են աշխարհագրական, վարչատարածքային և քաղաքական միավորներ՝ Արևմտյան Հայաստան և Արևելյան Հայաստան: 1828-ին Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, իսկ Արևմտյան Հայաստանը մնաց կրկին օսմանյան Թուրքիայի կազմում, որտեղ իրականացվեց ցեղասպանություն հայության այդ հատվածի նկատմամբ: Դարերով բաժանված վիճակի հետևանքով հայությունը ներկայանում էր երկու մեծ հատվածով: Սկզբնապես գործածության մեջ էին արևմտյան հայեր և արևելյան հայեր բառակապակցությունները, որոնցից հետագայում կազմվեցին (19-րդ դարի վերջերին) արևմտահայություն և արևելահայություն բառերը:

Արևմտահայություն-ը հոմանիշ է տիրապետող երկրի անվամբ կազմված տաճկահայություն և թ(ու)րքահայություն բառերին: Արևելահայություն բառին մինչև Հայաստանի անկախացումը հոմանիշ էր ռուսահայություն-ը, մասամբ նաև պարսկահայություն-ը և կովկասահայություն-ը:

Արևմտահայություն և արևելահայություն բառերը գրանցված են հայերենի միավեգվյան և թարգմանական բառարաններում, ընդհանուր գործածություն ունեն:

Անցյալում արևմտահայ իրականության մեջ՝ մամուլում և հանրային մտածողության մեջ, տարբերակում էին (երբեմն նաև հակադրում) հայ ազգային կյանքի կարևորագույն կենտրոն Կ. Պոլսի և գավառների հայությունը: Այս տարբերակման հիմունքով ստեղծվել է գավառահայություն բառը⁷⁹, որ նշանակում է «գավառում ապրող՝ գավառաբնակ հայություն»:

Արևելահայության դեպքում տարբերակման մի կողմում հայ մշակույթի կենտրոնների (կրկին Հայաստանից դուրս գտնվող Թիֆլիսի, Մոսկվայի կամ Պետերբուրգի), իսկ մյուս կողմում՝ բնաշխարհի գավառների հայությունն էր:

Գավառահայություն-ը կազմվել է 19-րդ դարի վերջերին, ավելի վաղ գործածության մեջ էր գավառահայ-ը⁸⁰:

3. 1080-1375 հայության բնօրրանից դուրս՝ Կիլիկիայում, հայկական պետականություն է հաստատված եղել, հայերն այստեղ ապրել են մինչև 1922 թ., երբ Ֆրանսիայի նահանջից հետո թուրքերը վերջնականապես հայաթա-

78 Առաջին բաժանումն իրականացվել է Ք. հ. 387-ին Պարսկաստանի և Հռոմի միջև, երկրորդ բաժանումը՝ 591-ին, երբ Հայաստանի մեծ մասն անցնում է Բյուզանդիային, ապա երկու անգամ՝ Թուրքիայի և Պարսկաստանի միջև, 1555-ին և 1639-ին:

79 Ունեն ակադեմիական և Աղայանի բացատրական բառարանները, իսկ Մալխասյանցի բառարանը և արևմտահայերենի բացատրական բառարանները՝ ոչ: Նրանք չունեն նաև այս կամ այն երկրի հայությունը նշանակող հավաքականները:

80 Հայտնի է «**Գավառահայ** հարստահարությունների տեղեկագիրը» (1872), որը Խրիմյան Հայրիկի հանձնարարությամբ և աջակցությամբ կազմել է Ստ. Փափագյանը, և ներկայացվել Ազգային ժողովին: Այս փաստաթղթի մասին գրելիս երբեմն առաջին բաղադրիչ է դառնում **գավառահայություն-ը**: Հմմտ. «Նրա նախաձեռնությամբ Ազգային ժողովում քննվել է **գավառահայության** հարստահարությունների խնդիրը և 1872-ի ապրիլին թուրք. կառավարության ներկայացվել բողոքագիր-տեղեկագիր» («Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 7, եր., 1981, էջ 641, «Սկրուիչ Ա Վանեցի» բառահոդվածը)

փեցին երկրամասը: Կիլիկիայում հազարամյակից ավելի ապրող հայերը գիտական գրականության մեջ և մամուլում անվանվել են կիլիկեցիներ, կիլիկյան հայեր, Կիլիկիայի հայեր / հայություն:

Կիլիկիահայություն հավաքական անունը բավական ուշ է կազմվել⁸¹. երկրանուն բաղադրիչն առանց հոդակապի՝ անփոփոխ միացել է հայություն բառին: Օրինակ՝ «*Ահավոր մղձավանջ ասրեց կիլիկիահայությունը (ավելի քան 200 հզ. հայ)*»⁸²:

4. Հայրենիքից դեռևս վաղ միջնադարում սկիզբ առած արտագաղթի և երկիրն անայացնող բռնագաղթերի հետևանքով հեռավոր և մոտիկ երկրներում գոյացան հայկական գաղութներ (համայնքներ), որոնք երբեմն դարեր շարունակ պահպանել են իրենց ազգային դիմագիծը: Գաղութների հայությունը կարևոր դերակատարում ուներ ողջ ազգի կյանքում: Այս իրողությունը ծնունդ տվեց գաղութահայություն բառին՝ ի տարբերություն հայրենիքում ապրող հայության. ըստ ակադեմիական բացատրական բառարանի՝ «գաղութում՝ գաղութներում ապրող հայությունը, գաղութահայերի ամբողջությունը, սփյուռքահայություն», ըստ Աղայանի՝ «Սփյուռքի հայկական գաղութների հայությունը, սփյուռքահայություն»⁸³:

Գաղութահայություն բառին հանդիպադրվում են Հայաստանի՝ հայրենիքի՝ հայաստանաբնակ կամ հայրենաբնակ հայություն բառակապակցությունները, նաև քիչ գործածական նորակազմ հայրենահայություն «հայրենիքի հայությունը, հայրենիքում ապրող հայերը» բառը⁸⁴: Արևմտահայերենի երկհատոր բացատրական բառարանը գաղթահայ և գաղութահայ տարբերակների բառահոդվածներում դնում է նրանց հավաքականները: Այսպես՝ գաղթահայ 1. «սփյուռքահայ, հայրենիքէն դուրս ապրող հայ». գոյականը՝ գաղթահայություն և գաղութահայ – գաղութահայություն⁸⁵: Բառն արևելահայերենում տարբերակայնություն չի դրսևորում, սահմանափակ գործածություն ունի, իմաստի հիմնական «բեռը» կրում է սփյուռքահայություն բառը:

5. Սփյուռքահայություն հավաքականն առաջացավ սփյուռքահայ ածականից կամ սփյուռքի հայություն բառակապակցությունից, երբ 1915–1923–ի Հայոց ցեղասպանությունից հետո ձևավորվեց սփյուռքը՝ իբրև պատմական նոր իրողություն: Գործածական բառ է, արձանագրված է բացատրական (ակադեմիական, Էդ. Աղայանի), ուղղագրական և թարգմանական տարբեր բառարաններում:

5.1 Հայություն բառով ձևավորվել է բառակազմական մասնակաղապար՝ «երկրանուն+ա+ հայություն» (նաև առանց հոդակապի՝ «երկրանուն+հայություն»): Բառակազմական հիմք են դառնում աշխարհի անցյալի և ներկայիս տարբեր երկրների անունները, այն երկրների, որոնցում հայկական համայնքներ են եղել ու այժմ էլ կան, կամ նորերն են ձևավորվում հայե-

81 Բառարանային միավոր է դարձել միայն վերջերս (տե՛ս **Գալստյան Ա. Ս.** և ուրիշներ, Նոր բառեր, Բ պրակ, Եր., 2016, էջ 72), թեև բառը նոր չէ:

82 «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 7, էջ 428:

83 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 1, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, 1969, էջ 366, **Է. Բ. Աղայան.** նշվ. բառարանը, էջ 217:

84 Տե՛ս **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորարանությունների բառարան, Եր., «Նաիրի», 2002, էջ 278:

85 Տե՛ս **Գնել արք. Ճէրէճեան, Տոնիկեան Փ. Կ., Տէր Խաչատուրեան Արտ.**, նշվ. բառարանը, հատ. 1, էջ 361–362:

րի անընդհատ տեղաշարժի հետևանքով: Կազմված բառերը «սփյուռքի հայություն» հասկացության մասնակի դրսևորումներն են, ուստի դրանց և սփյուռքահայություն բառի նշանակյալները գտնվում են ընդհանուրի և մասնավորի հարաբերության մեջ:

19-21-րդ դդ. կազմվել են «երկրանուն+ հայություն» կառուցվածքն ունեցող հիսունից ավելի (ներառյալ տարբերակները) հավաքական անուններ, ինչպես՝ ամերիկահայություն, բրազիլահայություն, եթովպահայություն, լեհահայություն, լիբանանահայություն, պարսկահայություն:

Առաջին բաղադրիչ երկրանունները բառի կազմում հանդես են գալիս՝

1. ամբողջական, անփոփոխ ձևով, ինչպես՝ իրանահայություն, իրաքահայություն, լիբանանահայություն, հորդանանահայություն.

2. երկրանվան վերջածանցների և այլ վերջնաբաղադրիչների զեղչմամբ՝ ա) –ստան՝ հնդկահայություն (< Հնդկաստան), լեհահայություն (< Լեհաստան), տաճկահայություն (< Տաճկաստան), հունահայություն (< Հունաստան).

բ) –իա՝ ավստրալահայություն (< Ավստրալիա), բուլղարահայություն (< Բուլղարիա), գերմանահայություն (< Գերմանիա).

գ) –ոս՝ եգիպտահայություն (< Եգիպտոս), կիպրահայություն (< Կիպրոս).

դ) –ք՝ վիրահայություն (< Վիրք «Վրաստան»).

ե) լանդ («հող»)՝ ֆիննահայություն (< Ֆինլանդիա):

Բառերի բաղադրիչները սովորաբար կապվում են ա հոդակապով: Քիչ դեպքերում, երբ երկրանունն անփոփոխ է միանում հայություն բաղադրիչին, երկրանվան վերջնահնչյուն ա-ի առկայությամբ հոդակապի կարիք չի զգացվում, ինչպես՝ արգենտինահայություն, սիրիահայություն, լատվիահայություն:

Երկրանուններից կազմված այդ բառերի մեջ կան ավանդաբար հայաշատ (և հիմնականում հայախոս) համայնքների հայությունն անվանող հավաքական գոյականներ, ինչպես՝ ամերիկահայություն, բուլղարահայություն, եգիպտահայություն, թուրքահայություն / տաճկահայություն (սրանք նաև «արևմտահայություն» են նշանակում), լիբանանահայություն, ռումինահայություն, ռուսահայություն (վերջերս շրջանառության մեջ է մտել սրա տարբերակը՝ ռուսաստանահայություն), պարսկահայություն (այժմ ավելի ու ավելի հաճախ է գործածվում երկրի ներկայիս անվամբ կազմված տարբերակը՝ իրանահայություն), սիրիահայություն, վիրահայություն, ֆրանսահայություն:

Մի շարք բառեր թերևս ավելի շատ պատմական արժեք ունեն, ինչպես՝ եթովպահայություն, լեհահայություն, հնդկահայություն, հունգարահայություն:

Այս կարգի բառերի մի մասը վերջին ժամանակներս է կազմվել (որոշ դեպքերում՝ ուղղակի ակտիվացել), հատկապես հետխորհրդային երկրների հայությունն անվանող հավաքական անունները՝ ադրբեջանահայություն, բելառուսահայություն, էստոնահայություն, թուրքմենահայություն, լատվիահայություն, լիտվահայություն, մոլդովահայություն, ուկրաինահայություն:

Հայաստանից ծայր առած արտագաղթը, սփյուռքում անդադար տեղի ունեցող տեղաշարժերը պատճառ դարձան արդեն գոյություն ունեցող համայնքների ստվարացման և զորացման, որի հետևանքով էլ հավաքական

անուններ ստեղծվեցին (կամ ակտիվացան), ինչպես՝ ավստրալահայություն, գերմանահայություն, կանադահայություն:

Մի շարք բառեր անվանում են նորակազմ կամ փոքրաթիվ համայնքների հայությունը, ինչպես՝ բելգիահայություն, դանիահայություն, իսպանահայություն, մեքսիկահայություն, շվեդահայություն, քուվեյթահայություն, ֆիննահայություն:

Բառերից մի քանիսն ունեն արևմտահայերեն տարբերակներ՝ թրքահայություն, պուլկարահայություն, ռումանահայություն (անցյալում ընդհանուր հայերեն էր), սուրիահայություն, գուիցերիահայություն (արևելահայ. շվեյցարահայություն) և այլն:

Տարբերակներ կան արևելահայերենում, ինչպես՝ անգլիահայություն – բրիտանահայություն, հոլանդահայություն – նիդերլանդահայություն և այլն:

Այս հավաքականները հատկանշվում են խիստ տարբեր հաճախականությամբ. հմտ. մի կողմից՝ հաճախադեպ պարսկահայություն, ամերիկահայություն, լիբանանահայություն և մյուս կողմից՝ հազվադեպ պորտուգալահայություն, մեքսիկահայություն, ուրուգվայահայություն: Դրանց հաճախականությունը նույնը չէ նաև ժամանակային տարբեր կտրվածքներում, օրինակ՝ եգիպտահայություն–ն անցյալում և ներկայում՝ հաշվի առնելով պատմական տարբեր շրջաններում եգիպտոսի հայ հավաքականության դերն ու կշիռը հայության կյանքում:

Հայերենի (արևելահայերենի և արևմտահայերենի) տարբեր բառարաններում գրանցված են այս բառերի բառակազմական հիմքերը՝ «արտերկրի հայ» նշանակող 31 բառեր, կան նաև նույնպիսի 50-ը ևս, որոնք տակավին գրանցված չեն⁸⁶: Փաստորեն բոլոր դեպքերում չէ, որ այս կամ այն երկրի հայությունը ներկայացնելու համար հավաքական գոյական է կազմվում: Եվ դա բնական է, քանի որ որոշ երկրներում հայերը խիստ սակավաթիվ են, երբեմն համայնքային կյանք չունեն (ազգային, կրթական, եկեղեցական և մշակութային կառույցներ չկան) կամ էլ համայնքներն ուղղակի մարել են:

«Երկրանուն+ա+ հայություն» մասնակաղապարով կազմված և հայ հավաքականություն նշանակող այս բառերն անհետևողական և ոչ ամբողջական արձանագրվել են հայերենի տարբեր բառարաններում:

Ակադեմիական բացատրական բառարանում գրանցվել է այսպիսի ընդամենը երեք բառ՝ լեհահայություն «լեհահայերի ամբողջությունը», ռուսահայություն «ռուսահայերի ամբողջականություն, ռուսահայեր», ֆրանսահայություն «Ֆրանսիայում ապրող հայերի ամբողջությունը» բառերը (վերջին երկուսը՝ *հիվանդ.* (հավաքական) նշումով): Բառարանի ամերիկահայ, անգլիահայ, արգենտինահայ, եգիպտահայ, թ(ու)րքահայ, հնդկահայ, հունահայ, հունգարահայ, պարսկահայ, ռումինահայ⁸⁷ բառերից կազմված հավաքականները, որոնք գործածական են հայերեն գիտական գրականության մեջ և մամուլում (կային նաև բառարանը կազմելու ժամանակ), չեն ներառվել բառացանկ:

Էդ. Աղայանի բառարանում բառակազմը փոքր-ինչ ընդլայնվել է և

86 Տե՛ս Գյուրջինյան Գ., Արտերկրի հայ իմաստային խմբի բառարանային գրանցում չունեցող բառային միավորների քննություն, «Էջմիածին», 2018, Ա, էջ 57-77:

87 Հմտ. Գյուրջինյան Գ., Արտերկրի հայ իմաստային խմբի բառերի բառարանագրական վերլուծությունը, «Էջմիածին», 2017, Ժ, էջ 74-105:

փոխվել: Գրանցվել է ընդամենը հինգ բառ՝ ամերիկահայություն, եգիպտահայություն, հունգարահայություն, ռուսահայություն, ֆրանսահայություն (տրվել է ֆրանսիահայություն տարբերակը ևս): Բառիմաստները (մեկ բացառությամբ) ձևակերպվել են նույն կաղապարով՝ «ամերիկահայ (եգիպտահայ / հունգարահայ / ֆրանսահայ) գաղութի հայությունը»: Ակնհայտ է, որ հայ բաղադրիչն անհարկի կրկնվում է: Միայն ռուսահայություն բառի իմաստն է տարբեր (և ընդունելի ձևով) տրվել՝ «ռուսահայերի հավաքական ամբողջությունը, արևելահայեր», որտեղ դրսևորվել է թե՛ հավաքականության իմաստը, թե՛ հոգնակիի գաղափարը: Բառարանում գրանցված թ(ու)րքահայ, լեհահայ, հնդկահայ, ռումինահայ բառերի հավաքականները չկան, և դրանց բացակայությունը դժվար է հիմնավորել:

Հովհ. Բարսեղյանի ուղղագրական ծավալուն բառարանն արձանագրել է հիշյալ մասնակաղապարով կազմված 14 հավաքական գոյական՝ ամերիկահայություն, անգլիահայություն, արգենտինահայություն, եգիպտահայություն, թուրքահայություն, լեհահայություն, լիբանանահայություն, հնդկահայություն, հունգարահայություն, պարսկահայություն, ռումինահայություն, ռուսահայություն, տաճկահայություն և ֆրանսահայություն⁸⁸:

5.2 Բառերի առաջին բաղադրիչ դառնում են նաև հայաբնակ տարածաշրջանների, երկրամասերի անուններ, ինչպես՝ կովկասահայություն, համչենահայություն⁸⁹, դրիմահայություն⁹⁰, չերքեզահայություն⁹¹, արխազահայություն⁹², աջարահայություն⁹³, փերիահայություն⁹⁴:

Հիշյալ բառերի հիմք դարձած տարածաշրջանները վարչականորեն ենթակա են (կամ էին) Հայաստանի անմիջական հարևան երկրներին (Թուրքիա, Իրան, Վրաստան) կամ էլ տարածաշրջանում կարևոր դերակատարում ունեցող Ռուսաստանին, որի կազմում է եղել Հայաստանը 1828-1918 թթ., ապա միննույն երկրի սահմաններում 1920-1991 թթ.:

Բնագրային օրինակներ՝ «Սորխաթում, որը **դրիմահայության բնակավայրերից էր, հայերը զանգվածաբար սկսել են հաստատվել XIV դ. սկզբից**», «Նա մրահոգություն է հայտնում Վեհափառին **չերքեզահայության շրջանում եկեղեցու բացակայության առիթով**», «Հեյրազայում **արխազահայությունը համայրվել է Մեծ եղեռնից փրկվածներով, Զավախքից և այլ վայրերից փեղափոխված հայերով**», «Շապր չնչին գործ է կատարել Փերիան և **փերիա-**

88 Տե՛ս Բարսեղյան Հ. Խ., նշվ. բառարանը:

89 Համչենահայերը մինչև 19-րդ դարի 90-ականները հավաք ապրել են հիմնականում Թուրքիայի Սամսուն քաղաքից մինչև Բաթում ընկած ծովափնյա ընդարձակ տարածքներում, քրիստոնյա համչենահայերը նախանցյալ դարի 60-70-ականներին գաղթել են ռուսական կայսրության սևծովյան ափի տարածքներ՝ Արխազիա, Եկատերինոդար (այժմ՝ Կրասնոդար), ցեղասպանությունից հետո՝ նաև Հայաստան (տե՛ս Ավվրջյան Հ., Համչենը և համչենահայությունը. արդի հիմնախնդիրները, եր., «Էդիթ Պրինտ», 2016, էջ 32-120):

90 Դրիմը թերակղզի է Սև ծովի հյուսիսային մասում. հայերն այստեղ այնքան շատ են եղել, որ XV դարում թերակղզու հարավարևելյան հատվածն անվանել են Armenia maritima («Ծովային Հայաստան»): Այսօր Դրիմում ապրում է շուրջ 20 հազար հայ:

91 Չերքեզիան տարածաշրջան է Ռուսաստանում՝ Հյուսիսային Կովկասում, Սև ծովի արևելյան ափի երկայնքով, ներկայիս Ադրդեայի Հանրապետությունում: Հայերն այստեղ են տեղափոխվել Դրիմից. (թուրքերի գրավումից հետո): Հարյուրամյակներ ապրելով այստեղ և յուրացնելով չերքեզների սովորույթներն ու ավանդույթները՝ տեղի հայերը հայության յուրահատուկ խումբ են կազմել:

92 Արխազիան ինքնավար հանրապետություն էր Վրաստանի կազմում, այժմ՝ չճանաչված երկիր (Ռուսաստանից հարավ): Ապրում են մի քանի տասնյակ հազար հայեր, որոնք ունեն դպրոցներ և այլն:

93 Աջարիան հանրապետություն է Վրաստանի կազմում: Այստեղ ապրում է մինչև 30 հազար հայ:

94 Փերիան գավառ է Իրանի Սպահանի նահանգում, որտեղ կային 17 հայաբնակ գյուղեր: Փերիահայերի մեծ մասը ներգաղթել է Հայաստան:

հայությունը ծանօթացնելու և ներկայացնելու համայն հայություն»⁹⁵:

20-րդ դարի 90-ականներին Հայաստանից ծայր առած արտագաղթի հետևանքով ավելացավ հեռավոր Միբիրի հայությունը, որն անգամ եկեղեցիներ է կառուցել: Կազմվել է սիբիրահայություն հավաքական գոյականը. «Գիրք՝ **սիբիրահայության մասին**»⁹⁶:

Թվարկված բառերը գործածական են գիտական գրականության մեջ և մամուլի լեզվում, բառարանային գրանցում ունի միայն կովկասահայությունը (կա ակադեմիական և Աղայանի բացատրական բառարաններում և այլուր):

5.3 Բառերի առաջին բաղադրիչ դառնում են հայաբնակ քաղաքների անունները: Բառակազմական հիմք դարձած քաղաքները՝

ա) սովորաբար հայ մշակույթի և ազգային կյանքի նշանակալից կենտրոններ են եղել և այժմ էլ հիմնականում այդպիսիք են, ինչպես՝ պոլսահայություն, թիֆլիսահայություն / թբիլիսահայություն, փարիզահայություն, բեյրութահայություն,

բ) միայն հայ բնակչություն ունեն, հայաքաղաքի բնակչությունն են անվանում, ինչպես՝ ջուղահայություն (բառային տարբերակն է սպահանահայություն),

գ) հատկանշվում են մեծաթիվ հայ բնակչությամբ (լուսանջելեսահայություն, գլենդելահայություն, թեիրանահայություն),

դ) հայաբնակ են եղել և կազմակերպված համայնքներ են ունեցել պատմական այս կամ այն ժամանակաշրջանում, այժմ հայ հավաքական բնակչություն չունեն, ինչպես՝ լվովահայություն, մադրասահայություն:

Բնագրային մի քանի օրինակներ՝ «... *պեղք է մրսածենք: Այնպես, ինչպես **բեյրութահայության, սպահանահայության, Մոսկվայի հայության, Կրասնոդարի և Լոս Անջելեսի հայության մասին***», «*Իմ այցը սահմանափակվել է **լուսանջելեսահայության** հետ հանդիպումներով*», «**Գլենդելահայությունը** բազմիցս ապացուցել է, որ միասնականությամբ հնարավոր է հասնել հաջողության», «... իր «**Արարապ**» մարզաւանով շարունակում է մնալի **թեիրանահայութեան** բարախող սիրտը», «... ընդգծեց **լվովահայության** ունեցած պատմական ավանդը», «**Մեծապես լուսաբանվել է մադրասահայության առօրյան**»⁹⁷:

Այս բառերը բնութագրվում են տարբեր հաճախականությամբ. մի կողմից՝ հաճախադեպ պոլսահայություն, հալեպահայություն, թիֆլիսահայություն, մյուս կողմից՝ հազվադեպ մոսկվահայություն, պետերբուրգահայություն, դամասկոսահայություն: Հարկ է նշել, որ բառեր կազմվել են նմանակության հիման վրա (շիրազահայություն⁹⁸, ռոստովահայություն⁹⁹), որոնք գրեթե գործածական չեն:

95 «Հայկական սովետական հանրագիտարան», հատ. 11, եր., 1985, էջ 110, «Հայ գինվոր», N 8-15.06.2011 «Հայ սփյուռք» հանրագիտարան, եր., 2003, էջ 557, «Ալիք» օրաթերթի (Թեիրան) հավելված, հուլիս, 2014: 96 <https://armenpress.am/arm/news/370615>:

97 «Հայկական ժամանակ» (29.03.2014), «Չորրորդ իշխանություն» (9.09.2009), www.mindiaspora.am/am/Congratulations/5168 (ՀՀ Սփյուռքի նախարարության կայքն է), «Ալիք» (Թեիրան, 13.01.2014), «Էջմիածին» (1998, Բ-Գ, էջ 235), «Էջմիածին» (2007, Ը, էջ 91):

98 Տե՛ս **Գյուրջիյան Դ.**, «Պարսկաստանում ապրող հայ» նշանակող բառերը. իմաստակառուցվածքային և բառարանագրական քննություն, «ՎԷՄ», եր., 2018, N 1, էջ 75-90:

99 Ռուսաստանի եվրոպական մասի հարավում գտնվող Դոնի Ռոստով քաղաքն իր մեջ է առել երբեմնի Նոր Նախիջևան հայաքաղաքը:

«Քաղաքանուն+ա+ հայություն» մասնակաղապարով կազմված բառերը բացատրական ընդարձակ բառարաններում հիմնականում չեն արձանագրվել, սակայն եզակի դեպքեր եղել են: Բոլորովին անհասկանալի է, որ ակադեմիական բացատրական բառարանում արձանագրվել է թիֆլիսահայություն «թիֆլիսահայերի ամբողջություն» բառը¹⁰⁰, իսկ պոլսահայություն-ը՝ ոչ: Նորաբանությունների բառարանում կա միայն պետերբուրգահայություն-ը՝ «Պետերբուրգում ապրող հայություն»¹⁰¹:

5.4 Մի քանի բառերում տեսնում ենք պատմական Հայաստանի նահանգների, գավառների, քաղաքների անունները: Քանի որ օտար տիրապետության անցնելուց հետո դրանց բնակչության ազգային կազմը զգալիապես փոխվել էր, բառերի միջոցով հայությունը գատվում-առանձնացվում է ոչ հայ բնակչությունից: Այդ հիմունքով են կազմվել աղճնիքահայություն (Աղճնիքն ըստ «Աշխարհացույցի» Մեծ Հայքի երրորդ նահանգն էր), սեբաստահայություն (Սեբաստիան կամ Սվազը քաղաք էր Փոքր Հայքում), գարդմահայություն (Գարդմանքը գավառ էր Մեծ Հայքի Ուտիք աշխարհում) և այլն:

Բնագրային օրինակներ՝ «Ազգակցական և համայնքային փոխօգնության ձևերի վերապրուկները **աղճնիքահայության մեջ**», «**Սեբաստահայության մոտավոր անցյալի ուսումնասիրման տեսակետից կարևոր արժեք էին ներկայացնում....**», «.... **գարդմանահայության՝ իր նախնիների շիրիմների այցելելու ինդիքը**»¹⁰²: Այս բառերը հայերենի բառարաններում արձանագրված չեն:

Ի դեպ, հիշյալ բառերն ստեղծվել են, երբ դրանց նշանակյալ նահանգները, գավառները, քաղաքներն արդեն պարպված էին հայությունից:

5.5 Վերջին շրջանում են կազմվել նախիջևանահայություն, արցախահայություն և ջավախահայություն / ջավախքահայություն բառերը¹⁰³, որոնց առաջին բաղադրիչներն անվանում են հայրենի տարածքներ¹⁰⁴: Բացի Նախիջևանից (այն լիովին հայաթափվեց 1988-ին), հիշյալ տարածքներում հավաքական ապրում են հայության մեծ հատվածներ (Արցախն արդեն զուտ հայաբնակ է, Զավախքը՝ գերակշիռ մեծամասնությամբ հայաբնակ):

Հայաստանյան ներկայիս մարզերի կամ վարչատարածքային այլ միավորների անուններից (Տավուշ, Շիրակ, Լոռի, Տաշիր և այլն) առհասարակ նման հավաքականներ չեն կազմվել¹⁰⁵, մի բան, որ լիովին տրամաբանական է և ընդունելի:

5.6 Գյուղանուն հիմքով են կազմվել այնձարահայություն և քեսաբահայություն բառերը. «.... **նորահաս սերունդներում ջանքած դաստիարակությամբ**

100 Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 2, եր., 1972, էջ 205:

101 Տե՛ս **Էյոյան Ս.**, նշվ. բառարանը, էջ 430:

102 «Քաներ երևանի համալսարանի», 1979, թ. 1 (վերնագիր), «Լջմիածին», 1967, ք. 2, էջ 54, «Հայաստանի Հանրապետություն», 29.02.2008:

103 Առաջին բառի համար տե՛ս **Վարդանյան Ա.**, Ազնաբերդ: Նախիջևանահայության վերջին ամրոցը, եր., «Նախիջևան», 2000: Հաջորդ երկու բառերը տե՛ս **Էյոյան Ս.**, նշվ. բառարանը, էջ 74, 403 (գրանցվել է միայն **ջավախքահայություն** տարբերակը):

104 Նախիջևանը Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի գավառներից էր, 1921-ից Ադրբեջանի կազմում է, 1921-1988 թթ. վարչականորեն Ադրբեջանի կազմում էր Լեռնային Դարաբաղը (այժմ՝ Արցախի Հանրապետություն), իսկ պատմական Զավաքը Վրաստանի Հանրապետության կազմում է:

105 Եզակի է **սյունահայ**-ը, որ մեզ հայտնի է մեկ գործածությամբ. «**Սյունահայ աշխարհի Բղեն գավառը**» («Պատմա-բանասիրական հանդես», 1978, N 1 (վերնագիր)):

հարստացուցին **այնձարահայությունն կեանքը**», «Հայոց Եկեղեցին օգնության ձեռք է մեկնում **բեասրահայությանը**»¹⁰⁶: Առաջին բաղադրիչները հաշարնակ հայտնի գյուղերի անուններ են:

Այս կարգի բառերը քիչ են, քանի որ այժմյան Սփյուռքում ամբողջովին (կամ մասամբ) հայաբնակ գյուղերը հատուկենտ են¹⁰⁷, դրանցից շատերի անունները ծանոթ չեն հայությանը, քանի որ հիշյալ գյուղերը նշանակալից դերակատարում չունեն, հայկական լրատվամիջոցներում և գրականության մեջ նրանց մասին հազվադեպ է խոսվում, ուստի և այս կարգի բառերի կազմության հիմք չեն դարձել:

6. Հայություն վերջնաբաղադրիչով բառերի մեջ կան նաև կրոնով և դավանությամբ տարբերակվող հայերի ամբողջություն նշանակող հավաքական անուններ: Դրանցից կաթոլիկահայությունը, որ նշանակում է «կաթոլիկ դավանանքին պատկանող հայերի ամբողջություն», բառարանային գրանցում ունի¹⁰⁸: Բառակազմական հիմքն է կաթոլիկահայը, որ գրանցված է մի շարք բառարաններում:

Վերջին շրջանում իսլամացած հայեր բառակապակցությանը զուգահեռ, թեև հազվադեպ, սկսել են գործածել իսլամահայություն բառը (հմնտ. իսլամահայ, որ կրկին հազվադեպ է): Օրինակ՝ «... թոյլադրվեց արդահայրվել, գործածել ցեղասպանություն բառը, խոսվեց **իսլամահայության մասին**»¹⁰⁹: Բառը կազմվեց, երբ բռնի (կամ հարկադրված կամովին) իսլամացած հայերի սերունդները ազգային ինքնության կանչով սկսեցին կազմակերպվել և որոշակի միասնականություն դրսևորել:

Կրոնով կամ դավանանքով տարբերակված հայություն նշանակող այլ հավաքական գոյականներ չկան, գործածվում են բառերի և բառակապակցությունների հոգնակիի ձևեր՝ հայ քրիստոնյաներ, լուսավորչականներ, հայադավաններ, հայ քաղկեդոնականներ, ավետարանականներ և այլն:

7. Կան նաև դիպվածային կազմություններ, օրինակ՝ ֆեյսբուքահայություն «Ֆեյսբուք սոցցանցում գրանցված հայերը՝ իբրև հավաքական ամբողջություն», որ բավական գործածական է համացանցում, նաև պաթոսահայություն «կեղծ հայրենասիրական պաթոսով համակված հայերի ամբողջությունը» (գործածական են սրանց բառակազմական հիմքերը ևս՝ ֆեյսբուքահայ և պաթոսահայ):

Հայաժողով

Հայաժողովը միջինհայերենյան կազմություն է: Ն. Բյուզանդացին բերում է ԺԴ դարի հիշատակարանից այս օրինակը՝ «Եղև սկիզբն և կայարանն սորա ի մեծահոշակ, բազմամարդ, յորվաժողով, գանձոնակ, բարեղիքաբախտ Սոյխաթ, կոչեցեալ Ղրիմ, ի վերնաբնակ **հայաժողով** թաղս հողայարկեալ...» և նշում խոսքիմասային արժեքը՝ ածական, առանց իմաստ նշե-

106 «Ազրակ», Պեյրուք, 27.02.2017, «Առավոտ», Եր., 15.04.2014: Հայաբնակ Այնձարը Լիբանանում է, Քեսաբ/Քեսապը՝ Սիրիայում:

107 Բացառություններից են հայկական Վազրֆ գյուղը Թուրքիայում, հայաբնակ գյուղեր Արևազիայում, Ռուսաստանում, մինչև վերջին տասնամյակները՝ նաև Իրանում (Փերիայի Բոլորան գյուղում, օրինակ, այժմ մի քանի բնտանիք հայ է ապրում), ավելի վաղ՝ Սիրիայում և Իրաքում:

108 Տե՛ս **Բարսեղյան Հ. Խ.**, նշվ. բառարանը, էջ 457:

109 www.lin.am/245420.html?setoption=mobile&lang=arm:

լու¹¹⁰: Բնագրային նույն օրինակով և «հայաբնակ» իմաստով գրանցված է միջին հայերենի բառարանում¹¹¹:

Հայախումբ և հայակոյտ բառերի նման սա էլ հետագայում՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, գործածվել է գոյականի արժեքով: Օրինակ՝ «*Կուսրանսրի-նուսոյիս մայրաքաղաքումը այնքան է Հայոց բազմութիւնը, որ կարծենք թէ ո՛չ Անի և ո՛չ Կաֆա իրանց բազաւած ժամանակը ունեցել են այնպիսի Հայածողով*»¹¹²:

Աշխարհաբարի բացատրական բառարաններում բառն առհասարակ գրանցված չէ, կա Հովհ. Բարսեղյանի ուղղագրական բառարանում¹¹³, իսկ Ա. Սուքիասյանի հոմանիշների բառարանում թեև գլխաբառ չէ, սակայն, ինչպես տեսանք, զետեղվել է հայախումբ բառի հոմանիշների շարքում:

Հայաբնակություն

Հայ հավաքականություն նշանակող բառային մյուս միավորների համեմատ հայաբնակություն-ը նոր է, 19-րդ դարի վերջին քառորդի կազմություն: Ստ. Մալխասյանցի բառարանում ներկայացված է «հայ բնակչություն, հայ բնակիչներ» իմաստով¹¹⁴, համարժեք է հայ բնակչություն բառակապակցությանը: Ակադեմիական բառարանը բառի բացատրությունից (Մալխասյանցի համեմատությամբ) իրավացիորեն զեղչել է «հայ բնակիչներ»-ը¹¹⁵: Էդ. Աղայանը նշել է երկու իմաստ. առաջինը կրկնում է Մալխասյանցին, երկրորդը՝ «հայաբնակ լինելը», բառարանագիրն է ձշտորեն ավելացրել¹¹⁶:

Բառակազմական հիմքը հայաբնակ «հայերով բնակեցված, որտեղ հայեր են ապրում, հայ բնակչություն ունեցող» ածականն է: Ձևաիմաստային առումով համեմատելի է ազգաբնակություն¹¹⁷ բառին, որն ընդհանուր իմաստ ունի:

Ընդհանուր հայերեն բառ է. հանդիպում է ն՝ արևմտահայերենում և՛ արևելահայերենում. «*Կուսրանդնուսոյոյ մէջ հայաբնակութեան մը գոյութիւնը պարտութենէն ակներև է*» (Օրմանյան պատրիարք)¹¹⁸ և «*Անիրավ Զալալեղիինը ... հայաբնակության մեծագոյն մասը սրի քաշեց*» (Պ. Պոռոջյան)¹¹⁹:

Հավաքականության իմաստով գործածությունից ներկայում դուրս է մղվել, փոխարենը գործածվում են հայություն բառը կամ հայ բնակչություն բառակապակցությունը:

110 Տե՛ս Նորայր Ն. Բիզանդացի, նշվ. բառագիրքը, էջ 409:

111 Տե՛ս Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ 402:

112 «Հուսիս» (Ս. Պետերբուրգ), 1863, հատ. 12:

113 Տե՛ս Բարսեղյան Հ. Խ., նշվ. բառարանը, էջ 538:

114 Տե՛ս Մալխասեանց Ստ., նշվ. բառարանը, հատ. 3, էջ 36:

115 Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հատ. 3, էջ 280:

116 Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. բառարանը, էջ 810: Երկրորդ իմաստի համար հմնտ. «...սոնջվում է Արցախի և հարևան անդրկոյրյան փարածքների հայաբնակության պարտության ... խնդիրներին» («Պատմաբանասիրական հանդես», 2008, N 2, էջ 288):

117 Այժմ գործածական է ազգաբնակչություն բառը: Հմնտ. Արախանյանց Ա., Ազգաբնակչությունը և ազգաբնակչական շարժումները, Թիֆլիս, 1883:

118 Տե՛ս Մաղաքիա արք. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, Անթիլիաս, 2001, էջ 2147-2148:

119 Տե՛ս Պոռոջյան Պ., Սկիզբն երկանց. «Երկերի ժողովածու 7 հատորով», Եր., «Հայպետրատ», 1963, էջ 408 (երկը առաջին անգամ տպագրվել է 1892-ին): Նաև սա՝ «... ծրագրի մի մասը Վարազա ջրջակա հայաբնակության մեջ արդեն ի կարար է սծված» (էջ 379):

Եզրակացություններ

- Հայ հավաքականությունն նշանակող հայերեն մի շարք բառային միավորներ կան, որոնք ունեն հայ բաղադրիչը՝ հայք, հայեար, հայորեար, հայաստան (ազգ), հայաստանեայք, հայակոյտ, հայախումբ, հայագունդ, հայություն, հայաժողով, հայաբնակություն:

- Հայ հավաքականությունն նշանակող բառային միավորներն առաջացել են հայոց լեզվի զարգացման տարբեր փուլերում՝ նախագրաբարյան (հայք), գրաբարյան, 5-րդ դար (հայորեար, հայաստան (ազգ), հայակոյտ), 11-րդ դար (հայութիւն), աշխարհաբար՝ 18-րդ դար (հայագունդ), 19-րդ դարի երկրորդ կես (հայախումբ, հայաժողով, հայաբնակություն):

- Հայ հավաքականությունն նշանակող բառային միավորները հիմնականում բառակազմության արգասիք են, ինչպես նաև առաջ են եկել քերականական ձևի քարացման և խոսքիմասային փոխանցման հետևանքով:

- Հայ հավաքականությունն նշանակող բառային միավորները ցույց են տալիս հայերի ամբողջությունը՝ ա) առանց որևէ տարբերակման, բ) ըստ հայրենիքում և հայրենիքից դուրս ապրելու հանգամանքի, գ) հայերի գլխավորների, իշխանների համախումբը, դ) մարտիկների և այլն:

- Արդի հայերենում հաճախադեպ է հայություն-ը, խիստ հազվադեպ՝ հայաբնակություն-ը, հայաստանեայք-ը պահպանվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի բաղադրյալ անվանման մեջ, որտեղ նրա հավաքականության իմաստը մթազնել է: Աշխարհաբարում հայք-ը հնաբանության արժեք է ձեռք բերել, մնացածը գործածությունից դուրս են եկել:

- Բառակազմական արժեք ունի հայություն-ը, որով բազմաթիվ բառեր են կազմվել Հայաստանի երկու մասերի (Արևմտյան և Արևելյան), նահանգների / աշխարհների, երկրամասերի, ինչպես նաև հայ համայնքներ ունեցող երկրների, տարածաշրջանների, քաղաքների և գյուղերի, ինչպես նաև կրոնական համայնքների անուններից: Կան նորակազմություններ և դիպվածային կազմություններ:

- Հայություն սերող հիմքով բառերը չհամակարգված և թերի գրանցվել են արևելահայերենի բացատրական, ուղղագրական և ուրիշ բառարաններում: Արևմտահայերենի միալեզվյան բառարաններն այդպիսիք չեն արձանագրել:

- Հայություն հավաքականը և նրանով բաղադրվածները (արևելահայություն, արևմտահայություն, պարսկահայություն, սփյուռքահայություն, պոլսահայություն, արցախահայություն և այլն) ընդհանուրի և մասնավորի հարաբերության մեջ են՝ հավաքականության և հատվածականության յուրատեսակ հակադրամիասնությամբ:

- Հայ հավաքականությունն նշանակող բառերը գործածվում են հիմնականում մամուլի և հրապարակախոսության լեզվում, գիտական գրականության մեջ, ինչպես նաև պաշտոնական խոսքում, իսկ մի քանիսը համագործածական են:

Գավիթ Ս. Գյուրջինյան – լեզվաբան: 60-ից ավելի գիտական հոդվածների, բազմաթիվ դպրոցական և համալսարանական դաս-

սագրքերի, բառարանների հեղինակ: Գիտական հետաքրքրություններն են հայոց լեզվի բառակազմությունը և բառակազմական իմաստաբանությունը, բառապաշարը, բառարանագրությունը և բառարանագիտությունը, խոսքարվեստը, արդի հայերենի ուսուցման հարցերը:

Summary

LEXICAL UNITS OF THE ARMENIAN LANGUAGE MEANING ARMENIAN COMMUNITY

Davit S. Gyurjinyan

Key words – Armenian community, collective names, collective noun, real collective nouns, Armenians, Armenian people, Armenians of Diaspora.

The article studies the words (collective nouns) of the Armenian language, meaning Armenian community, aggregate of Armenians, their collectivity, as an inseparable unit. The lexical units with the component հայ “Armenian” are analyzed: հայք and հայեաք “Armenians”, հայորեաք “Armenians, their leaders, Armenian nobility”, հայաստան (ազգ) “Armenian people”, հայաստանեայք “residents of Armenia”, հայություն “Armenians, Armenian people”, հայազունդ “Armenian regiment”, հայաբնակություն “Armenian population”, etc. The time of formation of these collective names is revealed, special attention is paid to their first uses (since the 5th century).

Special attention is paid to the formations with the last component հայություն “Armenians” (արևելահայություն “Eastern Armenians, Armenians of Eastern Armenia”, արևմտահայություն “Western Armenians, Armenians of Western Armenia”, գավառահայություն “Armenians of provinces”, սփյուռքահայություն “foreign Armenians, Armenians from Diaspora”, ֆրանսահայություն “Armenians, living in France”, etc.).

Lexical units are analyzed from different sides (meaning, structure, variability, wordformative significance, frequency of use), their lexicographical processing is studied, the lexico-semantic links with other words of the Armenian language are indicated.

ЛЕКСИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ АРМЯНСКОГО ЯЗЫКА, ОЗНАЧАЮЩИЕ АРМЯНСКУЮ ОБЩНОСТЬ

Давид С. Гюрджинян

Ключевые слова – армянская общность, собирательные имена, собирательное существительное, исконно собирательные существительные, лексика армянского языка, лексикографическое описание, армяне, армянство, армяне диаспоры.

В статье рассматриваются лексические единицы (собирательные существительные) армянского языка, означающие армянскую общность, совокупность армян, их собирательность как неразделимое единое. Анализируются лексические единицы с компонентом հայ «армянин», հայր и հայրեր «армяне», հայրերից «армяне, их руководители, армянская знать», հայաշատի (ազգ) «армянский народ», հայաշատիները «жители Армении», հայրերն «армянство, армянский народ», հայազունը «армянский полк», հայրնաշիրերն «армянское население» и т.д. Выявляется время образования данных собирательных имен, особое внимание уделяется их первым употреблениям (начиная с V века).

Особое внимание уделяется образованиям с последним компонентом հայրերն «армянство» (արևելահայրերն «восточные армяне, армяне Восточной Армении», արևմտահայրերն «западные армяне, армяне Западной Армении», գաղափահայրերն «армяне провинции», սփյուռքահայրերն «зарубежные армяне, армяне диаспоры», ֆրանսահայրերն «армяне, проживающие во Франции» и т.д.).

Анализируются разные аспекты данных лексических единиц (значение, структура, вариативность, словообразовательная значимость, частотность), рассматривается их лексикографическая обработка, выявляются лексико-семантические связи с другими словами армянского языка.

REFERENCES

1. **Abrahamyan A. A.**, *Grabari Dzernark*, 4th edition., Ye., “Luys”, 1976. (In Armenian)
2. **Agatangeghos**, *Patmutyun Hayots*, Ye., “Yerevani hamalsarani hratarakchut’yun”, 1983. (In Armenian)
3. **Aghayan E. B.**, *Ardi hayereni batsatrakan bararan*, Ye., “Hayastan”, 1976. (In Armenian)
4. **Aghayan E. B.**, *Zhamanakakits hayereni holovumy ev khonarhummy*, Ye., “Haykan SSH GA hratarakchut’yun”, 1967. (In Armenian)
5. **Aghayan E. B.**, *Lezvabanutyun neratsutyun*, Ye., “Mitq” hratarakchut’yun, 1967. (In Armenian)

6. **Acharyan H.**, *Liakatar qerakanutyun hayots lezvi*, vol. 3, Ye., Haykakan SSR GA hratarakchut'yun, 1957. (In Armenian)
7. **Araqelyan V. D.**, *Aknarkner hayots grakan lezvi patutyun*, Ye., Haykakan SSR GA hratarakchut'yun, 1981. (In Armenian)
8. Ardzern bararan haykaznean lezui, B tpage., Venice, 1865. (In Armenian)
9. **Asatryan M. E.**, *Zhamanakakits hayots lezvi dzevabanutyun hartser*, A, "Yerevani hamalsarani hratarakchut'yun", Ye., 1970. (In Armenian)
10. Bargirq ashkharhabare i grabar, Venice, 1869. (In Armenian)
11. **Barseghyan H. Kh.**, *Hayeren ughghagrakan-ughghakhosakan, terminabanakan bararan*, Ye., "Luys", 1973. (In Armenian)
12. **Eloyan S.**, *Ardi hayereni norabanutyunneri bararan*, Ye., "Nairii", 2002. (In Armenian)
13. **Gabamachian S.**, *Nor baragirq hayeren lezui*, K. Polis, tp. R Sagaian, 1910. (In Armenian)
14. **Gabriel Avetikian**, Khachatur Sirmelian, Mkrtich Avgerian, *Nor bargirq, haykazian lezvui*, v. B., Venice, 1837. (In Armenian)
15. **Galstyan S. A.**, *Atsantsumy ev atsantsnery zhamanakakits hayerenum*, Ye., "Yerevani hamalsarani hratarakchut'yun", 1978. (In Armenian)
16. **Ghazaryan R. S.**, *Grabari bararan*, v. B, Ye., "Yerevani hamalsarani hratarakchut'yun", 2000. (In Armenian)
17. **Ghazaryan R. S.**, **Avetisyan H. M.**, *Mijin hayereni bararan*, Ye., "EPH hratarakchut'yun", 2009. (In Armenian)
18. **Gharibyan A. S.**, *Hay barbaragitivityun*, Ye., Haykakan SSR petakan heraka man-kavarzhakan institute, 1953. (In Armenian)
19. **Gyulzatyanyan D.**, *Grakan arevelahayereni kerakanutyun himunqner*, Ye., "Global" hamalsaran, 2016. (In Armenian)
20. **Gyurjinyan D.**, "Arterkri hay" imastayin khmbi bareri bararanagrakan verlutsut'yune, "Ejmiatsin", 2017, n. 10. (In Armenian)
21. **Gyurjinyan D.**, "Arterkri hay" imastayin khmbi bararanayin grantsum chunetsogh barayin miavorneri qnnutyun", "Ejmiatsin", 2018, n. 1. (In Armenian)
22. **Gyurjinyan D.**, "Parskastanum aprogh hay" nshanakogh barery. Imastakarutsvatsqayin ev bararanagrakan qnnutyun, "Vem", 2018, n. 1. (In Armenian)
23. Gnel arch. Jerejian, Tonikia P. K., Ter Khachaturian Art., *Hayots lezui nor bararan*, Beirut, "K. Tonikian ev vordiq", 1992, vol. 1. (In Armenian)
24. **Gyumjian M. K.**, *Yndardzak bararan hayerene angleren*, Beirut, 1970. (In Armenian)
25. Haykakan hamabarbar 2, **Koryun** "Varq Mashtotsi", Ye., "Haykakan SSH GA hratarakchut'yun", 1972. (In Armenian)
26. Haykakan hamabarbar 3, **Pavstosi Buzandatso** Patmutyun Hayots, vol. 2, Ye., "Haykakan SSH GA hratarakchut'yun", 1976. (In Armenian)
27. Haykakan hamabarbar 4/II, **Agatangeghos**, Patmutyun Hayots, Ye., "Haykakan SSH GA hratarakchut'yun", 1973. (In Armenian)
28. Haykakan hamabarbar 5. **Yeghishei** Vasn Vardanay ev Hayots paterazmin, vol. B, Ye., "Haykakan SSH GA hratarakchut'yun", 1978. (In Armenian)
29. Haykakan hamabarbar 6. **Ghazaray Parpetsu** Patmutyun Hayots, vol. 2, Ye., "Haykakan SSH GA hratarakchut'yun", 1978. (In Armenian)
30. Haykakan hamabarbar 7. **Movsisi Khorenatsvo** Patutyun Hayots, vol. 2, "Haykakan SSH GA hratarakchut'yun", Ye., 1976. (In Armenian)
31. **Hovhannes vrd. Kostandnupolsetsi**, *Ztutyun haykabanutyun kam qerakanutyun haykakan*, Rome, 1674. (In Armenian)

32. **Jahukyan G. B.**, *Hayots lezvi patmutyun. Nakhagrayin zhamanakashrjan*, Ye., “Haykakan SSH GA hratarakchut’yun”, 1987. (In Armenian)
33. **Jakhjakhian Manuel vrd.**, *Barigirq I barbar hay ev italakan*, Venice, 1837. (In Armenian)
34. **Karst Y.**, *Kilikian hayereni patmakan qerakanutyun*, Ye., Yerevani hamalsarani hratarakchut’yun, 2002. (In Armenian)
35. **Kranian Andranik vrd.**, *Gortsnakan bararan hayeren lezvi*, Beyrut, “Shirak”, 1970. (In Armenian)
36. **Malkhasyants St.**, *Hayeren batsatrakan bararan, vol. 3*, Ye., “Haykakan SSR petakan hratarakchut’yun”, 1944. (In Armenian)
37. **Margaryan A. S.**, *Hayots lezvi qerakanutyun, Dzevabanutyun*, Ye., “EPH hratarakchut’yun”, 2004. (In Armenian)
38. **Mkhitar Abbahayr**, *Qerakanutyun haykazian lezui*, Venice, 1779. (In Armenian)
39. **Movses Khorenatsi**, *Patmutyun Hayots*, Ye., Haykakan KSHS GA hratarakchut’yun, 1991. (In Armenian)
40. **Movses Khorenatsi**, *Patmutyun Hayots*, targmanutyuny, neratsutyuny eb tsanotagrutyunnery akad. St. Malkhasyantsi, Ye., “Hayastan”, 1968. (In Armenian)
41. **Norayr N. Byuzandatsi**, *Baragirq storing hayereni matenagrutyants XI-XV daruts*, hratarakchut’yan patrastets Martiros Minasyany, Geneva, 2000. (In Armenian)
42. **Petrosyan H. Z.**, *Goyakani tvi kargy hayerenum*, Ye., “Yerevani hamalsarani hratarakchut’yun”, 1972. (In Armenian)
43. **Petrosyan H. Z.**, *Hayerenagitakan bararan*, Ye., “Hayastan” 1987. (In Armenian)
44. **Petrosyan H. Z., Galstyan S. A., Gharagyulyan T. A.**, *Lezvabanakan bararan*, Ye., “Haykakan SSH GA hratarakchut’yun”, 1975. (In Armenian)
45. **Qerovbian G.**, *Hayeren bargirq ashkharhabar lezui*, Istanbul, “Aras”, 2011. (In Armenian)
46. **Sebeos**, *Patmutyun*, Ye., “Haykakan SSH GA hratarakchut’yun”, 1979. (In Armenian)
47. **Sebeos**, *Patmutyun*, Ye., arevelahayeren targmanutyuny G.Khachatryani ev V. Yeghiazatyani, “Zangak”, 2005. (In Armenian)
48. **Suqiasyan A. M.**, *Hayots lezvi homanishneri bararan*, Ye., “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakchut’yun”, 1967. (In Armenian)
49. **Suqiasyan A. M.**, *Hayots lezvi homanishneri batsatrakan bararan*, Ye., “Yerevani hamalsarani hratarakchut’yun”, 2009. (In Armenian)
50. **Ter Khachaturian A., Gangruni H., Tonikian P. K.**, *Hayots lezui nor bararan*, Beirut, “Tonikyan ev vordiq”, 1968. (In Armenian)
51. **Tsizmetsian Petros vrd.**, *Hayeren ashkharhabar lezui liakatar bararan*, vol. 2, Aleppo, 1957. (In Armenian)
52. **Zhamanakakits hayots lezvi batsatrakan bararan, vol. 3**, Ye., 1974, “Haykakan SSH gitut’yunneri akademiayi hratarakchut’yun”. (In Armenian)